

567

CYCLOSTYLED COPY OF

NEW

Rules and Regulations

OF THE

Armenian Philanthropic Academy

AS PRINTED IN 1843

Յ Ա Ռ Ա Ձ Ա Բ Ա Ն

Ինձ համար մեծ հաճոյք է գրել մի յառաջաբան մեքենագրւած պատճէնին ՆՈՐ ԿԱՐԳԻ ԵՒ ԿԱՆՈՆԻ ԿԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋԸ-ՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ԵՐԿԼԵՂՈՒ ԳՐՔՈՅԿԻՆ, որ տպագրւել է Մարդասիրական ճեմարանի տպարանում 1843 թւին:

Հայոց Մարդասիրական ճեմարանը հիմնւել է 1821 թւի Ապրիլ 2-ին եւ մատուցել անգնահատելի ծառայութիւն չնդկաստանի, իրաքի, Պարսկաստանի եւ Հարաւ-Արեւելեան Ասիոյ Հայ Համայնքի կրթական եւ դաստիարակչական գործին:

Բոլոր նրանք, որոնք բախտն են ունեցել ներս մտնել ճեմարանի շէմքից, ի խնդիր ուսումի եւ դաստիարակութեան, միշտ յիշել են իրենց ուսումնարանը սիրոյ, յարգանքի եւ երախտագիտութեան շերմ զգացումներով: Ինչպէս անցեալում, նոյնպէս եւ այժմ, նրանք խոր հետաքրքրութիւն են ցոյց տւել ճեմարանի նկատմամբ եւ իրենց յիշողութեան մէջ վառ են պահել ամենաչնչին պատահարն իսկ որ կապ է ունեցել ճեմարանի կամ իրենց դպրոցական կեանքի հետ:

Շուրջ քսանեւհինգ տարիներ առաջ, երբ պատեհութիւն ունեցայ քննելու եւ ուսումնասիրելու իմ իմաստուն աներօր, հանգուցեալ Եղիարդ Գլվրի թղթածրարները, հանդիպեցի թղթակցութեանց որոնք վերաբերում էին վերոյիշեալ կանոնագրքի միակ օրինակի անհետացման ճեմարանի տպարանից, 1868 թւականին) խորհրդաւոր պարագաների տակ:

Թղթածրարները պարունակում էին նամակներ ՀԱՅԵՐԸ ՀՆԴԱՍՄՏԱՆՈՒՄ գրքի արժանաւոր հեղինակ հանգուցեալ Պր. Մեսրոպ Զ. Սէթեանցից, որով յարգելի պատմաբանը խնդրում էր իմ աներօրից տեղեկութիւն հաւաքել կորսւած կանոնագրքի մասին իր ի սփիւռս աշխարհի ապրող ծանօթ-բարեկամներից որոնք ժամանակին սերտ կապ էին ունեցել ճեմարանի հետ:

Ստացւած պատասխաններից Լաւ յիշում եմ հանգուցեալ Պր. Կ. Յ. Զէյթունի էն նամակը որ պարունակում էր Գրքոյկի անհետացումին տանող պարագաների համառօտ պատմութիւնը:

Պր. Կ. Յ. Զէյթուն 1868 թւականին 15 տարեկան պատանի էր եւ Մարդասիրական ճեմարանի սան, իր տւած տեղեկութիւնը կարելի է վաւերական համարել: Համաձայն Պր. Զէյթունի, 1868 թւականին ճեմարանի կանոնագրքը վերատպելու հարցը վէճ էր ստեղծել ճեմարանի վարչութեան մէջ եւ բաժանել երկու խմբերի: Աւանդապահները պնդում էին որ Գրքոյկը եղածին պէս վերատպւի, իսկ հակառակորդները փոփոխութիւններ էին առաջադրում:

Ի վերջոյ աւանդապահ խմբին յաջողւում է ձեռնարկել կանոնագրքի վերատպման գործին ճեմարանի Տպարանում: Բայց տակաւին չորրորդ գլուխը չաւարտած գրքոյկի օգտագործելի միակ օրինակը խորհրդաւոր կերպով անհետանում է տպարանից եւ արարքը վերագրւում հակառակորդ խմբին:

Յաւով արձանագրում եմ էն պարագան որ իմ շատ սիրելի զոքանչը, հանգուցեալ Տիկ. Ովսանա Գլուրը, էս կարելուր նամակները անփոփոխաբար հրոյ ճարակ դարձրեց մի շարք անարժէք թղթերի հետ միասին:

F O R E W O R D.

It gives me great pleasure to write a Foreword to the cyclostyled copy of the bilingual booklet titled "NEW RULES AND REGULATIONS FOR THE MANAGEMENT AND DIRECTION OF THE ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY" which was printed in the Press of the Academy in the year 1843.

The Armenian College and Philanthropic Academy, founded on 2nd April 1821, has rendered invaluable service to the cause of education for Armenian Communities of India, Iran, Iraq and South East Asia. It has rightly commanded respect, gratitude and affection of a host of alumni, who have had the privilege of entering its gates in search of knowledge. They have evinced, and continue to evince, keen interest in their Alma Mater and cherish fondly even trivial incidents connected with its welfare and their school life.

About twenty-five years ago I had the opportunity of going through the papers and documents of my learned father-in-law, the late Edward Glover. Amongst these, I found correspondence related to the search for the one and only copy of the "NEW RULES AND REGULATIONS FOR THE MANAGEMENT AND DIRECTION OF THE ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY", which had mysteriously disappeared from the Press of the Academy, while in the process of being reprinted in the year 1868.

There were letters from the late Mesrovb J. Seth, the worthy author of "Armenians in India", requesting my father-in-law to ascertain the whereabouts of the booklet from his numerous friends who were connected with the Armenian College and Philanthropic Academy at the time and were then living in different parts of the world.

Of the replies received by my father-in-law to his queries I vividly remember a letter from the late Mr. C. J. Zeytoon, which contained a brief account of the disappearance of the booklet. In 1868 Mr. C. J. Zeytoon was fifteen years old and a pupil of the Academy, consequently his account may be considered authentic.

According to Mr. Zeytoon, in the year 1868 the authorities of the Academy were divided into two groups in respect of the Rules and Regulations governing the Academy. The "traditionalists" wanted to maintain the status quo, while their opponents advocated alterations. The former eventually got the upper hand and commenced reprinting of the "NEW RULES AND REGULATIONS FOR THE MANAGEMENT AND DIRECTIONS OF THE ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY" in the press of the Institution. Their efforts were, however, thwarted by their opponents, who caused the disappearance from the press of the only available copy, thereby bringing the progress of re-printing to an abrupt halt, prior to the completion of the Fourth Chapter.

It is a matter of great regret that those important letters were inadvertently destroyed by my late Mother-in-Law, Mrs. Ovsanna Glover.

Երբ 1961 թվին քննում ու դասաւորում էի Հայոց Նազարեթայ Ս. Եկեղեցու արխիւները եզական բախտն ու երջանկութիւնը ունեցայ երեւան հանելու կորսած գրքոյկը որ ապահով պահւել էր երկու հին եւ ծանր հաշւեգրքերի միջեւ սեղմած:

Ուրախութեամբ զեղուն սրտով հեռախօսեցի Ճեմարանի Տեսուչ Պր. Վահան Փոլատեանին եւ իրեն հաղորդեցի կատարած գիւտիս բարի Լուրը: Պատմեցի նաեւ ինչ որ կարգացել էի Պր. Զեյթունի նամակում տարիներ առաջ: Պր. Փոլատեան իր կարգին ինձ տեղեկացրեց թէ ինքն էլ էր Լսել միեւնոյն պատմութիւնը տարբեր աղբիւրներից եւ թէ Ճեմարանի գանձարկղում պահւած կար Գրքոյկի 16 էջերից բաղկացած կիսաւարտ սպազրութեան մի օրինակը: Յետագայ բաղդատութիւնից երեւան եկաւ որ վերատպագրւած 16 էջերը համապատասխանում են 85 էջերից բաղկացած կանոնագրքի 28 էջերին:

Կանոնագիրքը արժէքաւոր եւ վաւերական տեղեկութեանց աղբիւր է Ճեմարանի կառավարութեան, Տպարանի եւ երբեմնի հռչակաւոր Արարտեան Մատենադարանի պատմութեան համար: Դա նաեւ արտայայտութիւնն է մեր պապերի հայրենասիրութեան, եկեղեցասիրութեան, հեռատեսութեան եւ բարձր իտեալների:

Նկատի ունենալով Գրքոյկի պատմական արժէքը, Հայոց Նազարեթայ Ս. Եկեղեցու վարչութիւնը որոշել է, համաձայնութեամբ Ճեմարանի վարչութեան, զայն նւիրել Երեւանի Պետական Մատենադարանին:

Բազմագրւած 135 օրինակներ պահւած են Նազարեթայ Սուրբ Եկեղեցու Գրասենեակում հետաքրքրող հաստատութիւնների, կազմակերպութիւնների եւ անձերի համար:

Յուսաւի է որ շատեր պիտի կարգան յաջորդող էջերը, հաղորդւեն մեր նախահայրերի վեհ ոգիով եւ հետեւեն նրանց ազնիւ օրինակին:

Ք. Զեյթունի

Մ. Դ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Կալկաթա
18-7-66

երախտագէտ նախկին սան

In 1961, while examining and re-arranging the records of the Armenian Holy Church of Nazareth, I had the unique privilege and immense happiness of discovering the booklet securely wedged between two very old and heavy Ledgers. With joyful heart I spoke to Mr. V. Poladian, M.A., the Principal of the College and told him of my discovery and of the story which I had read in Mr. Zeytoon's letter years ago.


Mr. Poladian informed me that he had heard the same account about the booklet and that there was in the College safe a copy of the incomplete re-print, consisting of sixteen pages. On checking, it was revealed that these sixteen pages corresponded with the twenty-eight pages of the original booklet, which is comprised of eighty-five pages. This news was an added excitement and joy, because the sixteen page re-print confirmed the relevant story.

Apart from being a valuable and authentic source of information concerning the Management of the Academy, its curriculum, printing press and once famous Araratian Library, the booklet is an expression of the patriotism, foresight and high ideals of our ancestors.

In view of its historical value, the Committee of the Armenian Holy Church of Nazareth in concurrence with the Managers of the College, decided to present the booklet to the National Library of Erevan Armenia.

One hundred and thirty cyclostyled copies of the booklet are kept in the Vestry Office of the Armenian Church and those interested may obtain a copy.

It is earnestly hoped that many will read the pages that follow, Communicate with the spirit of our worthy ancestors and emulate their noble example.



M. D. ARATHOON.

(a grateful Alumnus.)

Calcutta.
18-7-1966.

Հ Ա Յ Կ Ե Ա Ն
Մ Ա Ր Դ Ա Ս Ի Ր Ա Ա Կ Ա Ն Զ Ե Մ Ա Ր Ա Ն

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵՆԷ ԼՍՅՈՑ

ԵՂԵԼՈՑ

Յ Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Հ Ն Դ Ի Կ Ս

ՅԵՐԿՐՈՐԴ ԱԻՈՒՐ ԱՊՐԻԼԻ 1821

—○○○○○○○○—

ARMENIAN
PHILANTHROPIC ACADEMY,
FOUNDED BY THE ARMENIAN COMMUNITY
OF INDIA,
ON THE 2ND APRIL, 1821.

Ն Ո Ր

Կ Ա Ր Գ Ք Ե Ի Կ Ա Ն Ո Ն Ք

ՎԱՄՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի Ն

—•••000•••—

ԳԼՈՒԽ Ա•

Հոգաբարձուք և Պաշտօնատարք

1.— Ընդհանրական կառավարութիւնն գործոց ուսումնարանին տացի
ի ձեռս չորս Հոգաբարձուաց ընտրելոց յանդամոց նորա միաբան հաւա-
նութեամբ Ընդհանրական ժողովոյ նոցա:

2.— Պարտականութիւն Հոգաբարձուացն եղիցի անթերի և անխոտոր
ի գործ դնել կամեանայն կարգն և կանոնս հաստատելս վասն դպրոցին,
և յամեանայնի ջանալ կօգուտս նորա յառաջացուցանել, առնելով ի կա-
տարման պարտեաց պաշտօնի իւրեանց զայնպիսի կատարելագործութիւնս,
որ հայիցին ի բարի նպատակս նոցին:

3.— Ընդհանրական ժողով անդամոց ուսումնարանին հաւաքեսցի ի
շինութեան նորա յառաջնումն Երկուշաբթի յամսեանս Փետրվարի յամե-
նայն տարւոջ, կամ թէ քանիցս անգամ և յատուկ պատճառ ցուցցի թէ Հո-
գաբարձուացն վասն գումարման նոցա: Ի տարեկան ժողովի անդ լինակատար
ծանօթութիւն բովանդակ գործառնութեանց նորին վասն նախընթաց ամին
դիցի առաջի նոցա• կարգք և կանոնք սահմանեսցին, եթէ հարկաւոր լինի-
ցին• և ամեանայն ինչ, որ դիցի առաջի նոցա, խորհեսցի և վճռեսցի• և
մին յանդամոց անտի ընտրեսցի չորրորդ Հոգաբարձու• չորրորդն եղեալ
ի նախընթաց ամին, կարգեսցի երրորդ, երրորդն, երկրորդ• երկրորդն) ա-
ռաջին կամ երէց Հոգաբարձու ի տեղին առաջին Հոգաբարձուի նախընթաց
տարւոյն• որ յայնժամ ըստ սովորութեան թեթևացի ի ծանրութենէ պաշ-
տօնի իւրոյ, թողլով զայն:

4.— Յամեանայն աւուր Շաբաթու եղիցի ժողով չորից Հոգաբարձու-
ուացն ի սենեկի դպրոցին, առ ի վերահասու լինել և յայտ առնել
զմիտս իւրեանց սակս գործառնութեան առաջին Հոգաբարձուին յանցեալ
շաբաթու, խորհիլ և վճռել զամեանայն ինչ եղեալ առաջի նոցա, և դնել
զառժամանակեայ կարգս, — ոչ լինելով ներհակ հաստատուն կարգադրու-
թեանցն— որ լիցին ի գործածութեան մինչև ի գումարումն անմիջական
Ընդհանրական ժողովոյն:

5.— Պարտականութիւն վարիչ Հոգաբարձուին եղիցի բազում աչա-
ւոր շութեամբ անմիջապէս ի կարգի ունիլ և կառավարել զդպրոցն յամե-
նայն իրողութիւնս նորա, և տեսանել զի կարգադրութիւնքն կատարես-
ցին զգուշութեամբ• ուղղել զձախնայն, քննել և յայտ առնել զմիտս իւր
ի վերայ արժողութեանց ընչից հարկաւոր եղելոց ուսումնարանին• վե-
րահասու լինել ամեանայն համարոց նոցա• ծանուցանել զամեանայն ժողո-
վոյ Հոգաբարձուացն, որ լինելոց է յամեանայն երես ամիսս առ ի քննել

N E W
RULES AND REGULATIONS
for the
Management and Direction
of the
ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY.

C H A P T E R I.

Managers and Office Bearers.

1. The general management of the affairs of the Institution is placed in the hands of a Committee consisting of four managers, unanimously chosen from among the members thereof, at their general meeting, convened for that purpose.

2. It shall be the duty of the managers to see that all the rules and regulations be strictly enforced, and to use their utmost endeavours to promote the welfare of the Institution. It shall also be their duty to introduce such improvements into Academy, as might be deemed conducive to its objects and ends.

3. A general meeting of the members of the Institution shall be convened in its apartments on the first Monday of the month of February in every year, or oftener if it be deemed necessary by the managers to convene them on particular occasions. At the annual general meeting a detailed account of all the affairs of the institution, for the preceding year, shall be submitted to them, rules and regulations made and adopted, if found necessary, and all other matters, relative to the school, which may be brought forward, considered and determined upon. From among the members of the institution one shall be elected successor to the fourth manager, who shall succeed the third, and the third shall succeed the second, and the second shall take the place of the first manager of the preceding year, who shall then, in conformity with the original rule, be relieved from the onus of his office and go out by rotation.

4. Weekly meetings of the managers shall be held on Saturdays in one of the apartments of the school, in order to communicate with each other on the proceedings of the first manager during the past week, to determine and resolve on whatever might be submitted for their deliberation, and to frame ad interim rules. (not militating against the established regulations) which shall be of force until the day of the general meeting of the members of the institution.


5. It shall be the duty of the first manager to exercise an efficient and vigilant superintendence over all the affairs of the institution, and to see that the regulations be properly attended to; to check and control the expenditure; to consider and pronounce upon the estimates which may be tendered for things required for the use of the institution, to examine all the accounts thereof, and to submit them to

զհամարսն անցեալ երից ամսոց, և առ ի գտանել զվաւերութիւն նոցա տալ պաշտօնակցաց իւրոց ի ժողովի զլիակատար ծանօթութիւն զվիճակէ և զընթացից ճեմարանին: զորքանութենէ դրամոցն մնացելոց ի ձեռին նորա, և զպահանջից դպրոցին: և պատրաստել տալ զգործն, զոր պարտ իցէ դնել առաջի ընդհանրական ժողովոյ:

6- Որ միանգամ կամիցի դառնալ մի ի յանդամոց Մարդասիրական ճեմարանին, պարտի հատուցանել նոյն ճեմարանին զերկու հարիւր ուսուցիչս կուսակաւոյ որպէս պարգև: Եւ ընտրութիւն նորա, որ կամիցի լինել անգամ երկրորդ քուէարկութեամբ — այսինքն բեւատով, — ընդհանրական ժողովի անդամոց Մարդասիրական ճեմարանին:

7- Հոգաբարձու կառավարիչքն գովով թուով չորք, եթէ դէպ լիցի ի վէճս ինչ, երկուցք ի մի, և միւս երկուցն, յայլ որոշմունս միաբանիլ, յայնժամ դիցեն զվէճն զայն առաջի ընդհանրական ժողովոյ անդամոց ճեմարանի:

8- Առաջին կամ երէց Հոգաբարձուն ունիցի լիակատար կարողութիւն ձեռնագրել զյետկարս և զթուղթս ամսական եկամտից, ստանալ և պահանջել զամսական եկամուտս վերաբերելի ճեմարանին, և հատուցանել զօրական և զամսական ծախս ճեմարանին: Բաց յայսպիսեաց, ստացումն և հատուցումն այլ ամենայն դրամոցեղիցի կից ձեռնագրութեամբք և հաւանութեամբ չորից հոգաբարձուացն:



ԳԼՈՒԽ Բ.

Ընդունելութիւն Մանկանց և այլն

1- Ամենայն թուղթք վասն ընդունելութեան մանկանց ի դպրոցն գրեսցին առ առաջին հոգաբարձուն, յորս նշանակեսցին հասակ նոցա, մտաւոր կարողութիւնք, եթէ ունիցին ինչ, անուն ազգին, և յօժարութիւն խնդրողացն զի մանկութեան հպատակ կալոց են կարգադրութեանց ճեմարանին:

2- Հասակ նոցա մի լիցի պակասագոյն քան զհինգ ամս, և մի աւելի քան զութն և տասն տարիս: յոր ի հասանել նոցին պահանջեսցի ի նոցուց թողուլ զդպրոցն: Այլ ի պահանջել հարկին, հոգաբարձուքըն կարեն ստանալ զաշակերտս, որոց հասակն իցէ առաւել քան զամս 18, և կամ թոյլ տալ ստացելոցն մնալ ի ճեմարանին ի լրանալ 18 ամաց հասակի նոցա, հաւանութեամբ ընդհանրական ժողովոյ անդամոց Մարդասիրական ճեմարանին:

3- Երեսուն տղայք և տասն աղջկուք կարտաւոր ծնողաց, որք իցեն ազգաւ և հաւատով Հայ, հրահանգեսցին ի դպրոցի անդ որպէս ձրի օրական աշակերտք: որոց պէտք, որպիսի են գիրք, թուղթ գրիչ և այլ այսպիսի պիտոյք ուսման Լցուսցին ծախուք ճեմարանին:

4- Պահանջեսցի ի նոցանէ միշտ յստակ զգեստուք գալ ի դպրարտունն:

the meeting of the managers, which shall be held at the end of every third month in order to look over the quarterly receipts and disbursements and to confirm them by their final sanction; to render at the meeting of his colleagues a full report of the state and proceedings of the school, and the state of the fund, shewing the balance in hand, and the out-standing demands of the school; and to prepare the business to be laid before the general meeting of the members of the institution.

6. A donation of Company's Rupees two hundred shall qualify the donor to be proposed a member of the institution. His election shall, however, be decided by ballot at the general meeting of the members thereof.

7. The number of the Committee of management being limited to four, should it happen that they may be equally divided on any question, that is to say, two of them being for, and two against the adoptions of the proposed question, then and in that case the subject of their division shall be referred to the consideration of the general meeting of the members of the institution.

8. The first manager is fully authorised to sign the monthly bills and receipts, to receive and demand the monthly income due to the institution, and to pay the daily and monthly expenses thereof. Independently of these, the receipt and payment of all other sums and monies shall be effected by the united signatures and sanction of the four managers.

CHAPTER II

Admission of Scholars, &c.

1. All applications for the admission of children into the school, shall be addressed to the first manager. The applicants shall be required to state in writing the age of the children; their mental attainments, should they have any, to what denomination they belong, and their willingness to conform to the rules of the institution.

2. At the time of their admission the boys shall not be under the age of five, nor exceed that of eighteen years. Those already admitted shall be required to quit the institution on their attaining to that age. But, in case of emergency, the managers are empowered to admit children exceeding the age of eighteen years, and to allow those already admitted to continue longer in the school, than the time limited above, by the sanction of the general meeting of the members of the Institution.

3. Thirty boys and ten girls of indigent Armenian parents, belonging to the Armenian Church, shall be educated in the school as day pupils, free of any charge. Books, stationery and so forth required for their use, shall be supplied to them at the expense of the Academy.


4. They shall be required invariably to attend school in clean clothes.

5.- Յորժամ որ ի նոցանէ աններկայ գտանիցի ի դպրոցի յաւուրց
ուսման, պատճառ աններկայութեան նորա գրով անխափան ծանուսցի գըլ-
խաւոր վարժապետին: Եթէ առանց գրոց գայցեն և պատճառ բաւական չի-
ցէ վասն նոցին աններկայութեան, յայնժամ պարտականութիւն վարժապե-
տաց Լիցի պատժել զնոսա ըստ արժանեաց:

6.- Ենողք կամ խնամածուք վարձատու օրական աշակերտաց պարտին
վճարել զվարձս հրահանգութեան նոցա մինչև ցայնօր, յորում գրով ծա-
նուսցեն զելս նոցա յուսումնարանէն:

7.- Ամսական վարձ օրական աշակերտի միոյ եղիցի 10 կամ 7 ուռ-
փիք, ըստ կարեաց ծնողաց կամ խնամածուացն: Այլ եթէ ծնող ոմն տայցէ
զերկուս վարձատու օրական մանկունս, յայնժամ ունիցի արտօնութիւն
յղելոյ զայլ ոմն ի մանկանց իւրոց առանց վարձու ի փոխարինութիւն
վարձուց երկացուցն:

8.- Ենողք կամ խնամածուք նոցա պարտին, ըստ պահանջման վարժա-
պետացն ճեմարանին, տալ զամենայն պիտոյս ուսման նոցա, որպէս գիրք,
թուղթ գրիչ և այլն:



ԳԼՈՒԽ Գ.

Բնակիչ Աշակերտք և այլն

1.- Ենող կամ խնամածու իւրաքանչիւր վարձատու բնակիչ աշակեր-
տի վճարեսցէ 30 ուռփիս առ ամիս վասն հրահանգութեան, կերակրոյ և
բնակութեան, և ի ժամանակի ընդունելութեան նորա 16 ուռփիս վասն
հանդերձարանի, մահճաց և անկողնոց, զորս դպրոցն տացէ և ամ ըստ ա-
մէ 6 ուռփիս վասն պահելոյ զայնս ի վիճակի մաքրութեան և նորոգու-
թեան: Ի թողուլ նորա զուսումնարանն, չկարէ տանիլ զայնս ընդ իւր:
Եթէ պահանջիցի ծնողացն, ինքեանք պարտին տալ զամենայն պիտոյս ուս-
ման: Այլ եթէ ճեմարանն տայցէ զայնս, ծնողք կամ խնամածուք մանկանց
պարտին վճարել զգինս նոցին ի ժամու պահանջման առաջին Հոգաբարձուն:

2.- Հասակ բնակիչ աշակերտի միոյ, ի ժամու ընդունելութեան մի
Լիցի առաւել քան զհագետասան ամս, և մի պակաս քան զվեց տարին:

3.- Հագետասան տղայք կարօտաւոր ծնողաց, որք իցեն ազգաւ և հա-
ւատով Հայ, կամ որք մնացեալք ընդ խնամածութեամբ բարեկամաց, ընկալ-
եալ Լիցին ի դպրոցն, որպէս մասնավարձ բնակիչ աշակերտք, և ձրի հրա-
հանգեսցին: Ենող կամ խնամածու այսպիսի աշակերտի միոյ հատուսցէ 12
ուռփիս առ ամիս վասն կերակրոյ, բնակութեան, կօշիկի, թափչի, բժշկի, հե-
րահատի և դեղօրէից նորա: Ի ժամանակի ընդունելութեան նորին, 16 ուռ-
փիս վասն հանդերձարանի, մահճաց և անկողնոց, զորս դպրոցն տացէ, և ամ
ըստ ամէ 6 ուռփիս վասն ծախուց պահելոյ զայնս ի մաքրութեան և ի նո-
րոգութեան: Ընթացն տացէ ձրի հրահանգող աշակերտաց զայլ ամենայն
պիտոյս, որպիսի են գիրք, թուղթ, գրիչ և այլն, ծախուք ճեմարանին:

5. Should any of the pupils be absent from the school during the days of instruction, the Rector of the head Master shall be made acquainted in writing with the cause of their absence. Should the absentees attend school unaccompanied by a note, expressive of a satisfactory reason for their absence, then and in that case they shall be visited with suitable correction by the masters.

6. The parents or guardians of paying pupils shall pay the bills for their schooling until the day, on which a written notice or intimation of their removal is forwarded to the first manager of the institution.

7. The rate of admission for each day pupil shall be ten or seven rupees per month according to the circumstances of the parents or guardians. But, if a parent shall have placed two paying day pupils in the school, then he shall have the privilege of requesting the free admission of another of his children in consideration of the two paying ones.

8. Their parents or guardians, when called upon by the masters of the school, shall supply them with books, stationery and other articles requisite for school use.

C H A P T E R I I I

On Boarders, &c.

1. The parent or guardian of each paying boarder shall pay thirty rupees per month for his education, board and lodging. At the time of his admission he shall also pay sixteen rupees for the use of wardrobe, cot and bedding supplied to him at the expense of the Institution, besides an annual sum of six rupees for the purpose of keeping them clean and in good order. When any of the boarders shall quit the institution, he shall by no means be allowed to remove them from school. The parents, if required, shall supply the boarders with all that is necessary for their tuition. Should their requisites, however, be supplied by the institution, then and in that case their parents or guardians shall pay for the articles thus supplied, on the presentation of the bill of the first manager.

2. At the time of their admission, the boarders shall not be under the age of six, nor exceed that of fifteen years.

3. Fifteen boys of indigent Armenian parents, belonging to the Armenian Church, or orphans placed under the protection of friends, shall be admitted into the institution as boarders on a partial monthly payment, and gratuitously educated. The parent or guardian of such a pupil shall pay twelve rupees per month, for his dieting, lodging, shoes, washing, as well as for doctor, medicine and barber. At the time of his admission he shall also pay sixteen rupees for the use of wardrobe, cot and bedding supplied to him at the expense of the institution, besides an annual sum of six rupees for the purpose of keeping them clean and in good order. Books, stationery and other requisites shall be supplied to pupils, educated gratis, at the expense of the institution.

4.— Մի թոյլ տացի մասնավարձ կամ ձրի ուսանող բնակիչ աշակերտաց մնալ ի դպրատանն աւելի քան զամս չորս․ իսկ եթէ բարեպէս վարիցին և գերագոյն ձիրս մտաց ունիցին, յայնժամ մնասցեն այլ ևս զամս երկու կամ աւելի ևս, ըստ տնօրէնութեան կառավարչաց, եթէ հասակ նոցա չիցէ աւելի քան զութն և տասն ամս:


5.— Ծնողք կամ խնամածուք, եթէ լիավարձ և թէ մասնավարձ բնակիչ աշակերտաց, պարտին տալ զհանդերձս մանկանց իւրեանց ըստ պահանջման առաջին հոգաբարձուին:

6.— Այլ ևս հինգ տղայք կարօտեալ ծնողաց, որք իցեն ազգաւ և հաւատով Հայ, և որք միանգամայն անտերուսչ իցեն մնացեալ, ընկալեալ լիցին յուսումնարանն որպէս ձրի բնակիչ և հրահանգող աշակերտք․ զորոց այլ ամենայն հարկաւոր պիտոյսն ճեմարանն ունի հոգալ: Ընտրութիւն և ընդունելութիւն այսպիսի մանկանց լիցի հաւանութեամբ և տնօրէնութեամբ ընդհանրական ժողովոյ անդամոց Մարդասիրական ճեմարանին: Հոգաբարձուքն իշխանութիւն ունիցին, զկնի կարևոր հրահանգութեան, տալ ըզնոսա յուսումն այսպիսի արհեստից կամ գործոց, որովք համարեսցին նոքա կարող լինել պիտանութեամբ գտանել զապրուստ իւրեանց:

7.— Եղիցի ի տնօրէնութեան ընդհանրական ժողովոյ այսուհետև յաւելուլ զհինգ թիւ սոցա ըստ առաւելութեան եկամտից դպրոցին:

8.— Մի թէ մասնավարձ և թէ թրի բնակիչ աշակերտք, վերստին ընկալեալ լիցին, զկնի միանգամ կամօք իւրեանց թողլոյ նոցա զդպրատունն առանց բաւական պատճառս տալոյ:

9.— Մի թողացուցի բնակիչ աշակերտաց, թէ մասնավարձուց և թէ լիավարձուց, բերել ընդ ինքեանց զայլ ինչ, բաց ի հանդերձից և ի գըրոց, ի միոյ գլխարկէ, և ի մի զոյգ կօշկաց, առանց արկեղ իրիքք քանզի ճեմարանն լցուսցէ զայսպիսիս ի պէտս պահելոյ զզգեստս մանկանց:



ԳԼՈՒԽ Դ.

Հայ Գլխաւոր Վարժապետ կամ Ռեկտոր և այլն.

1.— Գլխաւոր Վարժապետ կամ Ռեկտոր Հայկական Լեզուի, լիցի աշխարհական, ազգաւ Հայ և դաւանութեամբ հաւատարիմ վարդապետութեանց սբ. Եկեղեցւոյն Հայաստանեայց: Եղիցի նա և քաջամուտ ի Հայկական գրագիտութեան, վարող ի մարզել ի թուաբանութեան, ի Պատմութեան, ի բնական Պատմութեան և ի բարոյական իմաստասիրութեան: Ընտրութիւն և կամ ելանելն ի պաշտօնէ գլխաւոր Վարժապետին, լիցի հաւանութեամբ ընդհանրական ժողովոյ անդամոց ճեմարանին:

4. Pupils paying a partial sum, or receiving their education gratis, shall not be permitted to continue in the school longer than four years. But, in case they conduct themselves properly, or be possessed of superior talents, then they shall further remain two years or more, conformably to the discretion of the managers, provided they do not exceed the age of eighteen years.

5. The parents or guardians of boarders, paying either a full or partial sum, shall supply the clothing of their children or wards, when called upon so to do by the first manager.

6. Five boys, moreover, of indigent Armenian parents, belonging to the Armenian Church, left in a state of utter destitution, shall be admitted into the institution as foundation scholars, receiving their board, lodging and education gratuitously. All their other necessaries and requisites shall be provided at the expense of the institution. The election and admission of such foundation boys shall be decided by the assent and sanction of the general meeting of the members of the Philanthropic Academy. After their having gone through a necessary course of studies, the managers shall have the power to apprentice them to artists or tradesmen, so that they may ultimately be found capable to earn their livelihood by their industry and usefulness.

7. It shall be discretionary with the general meeting of the members of the institution, hereafter to increase the number of the foundation boys, now limited to five, in proportion to the augmentation of the income of the institution.

8. Such pupils, as are free boarders, or pay a monthly partial sum, after once-quitting the institution, of their own accord, shall not be re-admitted, without assigning satisfactory reasons.

9. No boarders, whether paying a full or a partial sum, shall be permitted to bring with them into the institution any other things, but their clothes, books, hats and shoes. No chest of drawers is required for them, as this and similar articles shall be supplied to them by the school.

CHAPTER IV.

The Armenian Head Master or Rector, &c.

1. The Rector, or Head Master of the institution, in the Armenian department, shall be an Armenian by birth and faithfully conform to the creed and doctrines of the Church of Armenia. He shall be a layman, thoroughly versed in the Armenian classical literature, and capable of giving instruction in arithmetic, in History, in Natural History and in Moral Philosophy. The election of the Rector, as well as his relinquishment of office, shall rest with the general meeting of the members of the institution.

2.- Բաց ի վերոյին կատարելութեանց, տացէ բաւական վկայականս բարի վարուց և բարեպաշտութեան, և անկեղծ հաւանութեան իւրոյ ընդ ամենայն կարգս և կանոնս դպրոցին, և յօժարութեամբ իւրոյ կառավարել զնա ըստ այնոցիկ:

3.- Վարձ նորա մի լիցի աւելի քան զերիս հարիւր ռուփիս առ ամիս:

4.- Պարտականութիւն լիցի իրկտորին տեսանել զամենայն ընթացս կառավարութեան ճեմարանին, զի ամենայնիւ ուղիղ և ըստ կանոնի ընթացայցէ, համեմատ ի սմա եղեալ կարգադրութեանցն. և եթէ լիցիցի խոտորումն ինչ ի կանոնաց, պարտ է նմա առժամայն ծանուցանել զայնմանէ երէց հոգաբարձուին:

5.- Բաց ի գործոց հրահանգութեանց, պարտի նա միշտ երթալ ի նընջարան մանկանցն, և տեսանել եթէ յստակ, ի կարգի և յառողջարար վիճակի իցէ ամենայն ինչ. և զգուշանալ զի այլ պաշտօնեայք և ծառայքն ճեմարանին անլրէպ պահեսցեն զկարգս և զկանոնսն:

6.- Ելիցի երկրորդ վարժապետ, որոյ վարձ մի լիցի աւելի քան զհարիւր ռուփիս առ ամիս:


7.- Կարգեսցի նա ի հոգաբարձուացն. լիցի ազգաւ Հայ և դաւանութեամբ հաւատարիմ վարդապետութեանց սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց: Պարտի տալ բաւական վկայականս կարողութեան ուսուցանելոյ, տեղեկութեան Հայկական գրագիտութեան, և բարի վարուց և բարեպաշտութեան: Եղիցի կարող աշակերտել զփոքրիկ մանկունս:

8.- Սա բացի յանձն առնելոյ զաստիճանս տուեալս ի ձեռս նորա, ներկայ լիցի ի ժամու ճաշու ընդ բնակիչ մանկանցն յամենայն փոփոխեօթնեկի, և ուսուսցէ նոցա բարեկարգութեամբ և ըստ ծիսի վարիլ:

9.- Եթէ հարկաւոր լինիցի, կարգեսցի օժանդակ ուսուցիչ մի, որոյ վարձ մի լիցի աւելի քան զյիսուսն ռուփիս առ ամիս: Եղիցի ազգաւ Հայ և դաւանութեամբ հաւատարիմ վարդապետութեանց սուրբ Եկեղեցւոյն Հայաստանեայց:

10.- Կարգեսցի սա ի հոգաբարձուացն. տացէ բաւական վկայականս բարի վարուց և բարեպաշտութեան, և կարող լինիցի ուսուցանել ըզփոքրիկ մանկունս:

11.- Սա բաց յուսուցանելոյ, յետ աւարտման հրահանգաց, և ի ժամանակին այնմիկ, յոր ուսանին Անգղերէն, պարտի տեսնելն օգնական լինել ի գրել զհաշիւսն և զայլ ամենայն ինչ, որ տացի նմա:



ԳԼՈՒԽ Ե.

Անգղիական Առաջին Վարժապետ և այլն

1.- Առաջին Վարժապետն Անգղիական Լեզուի պարտի լինել հետևող Եկեղեցւոյն Անգղիոյ. կարող լիցի ուսուցանել Անգղերէն և Լատիներէն. զԱշխարհագրութիւն, զՊատմութիւն, զԿիրառութիւն գնտոցն, զԹուաբանութիւն, զԵրկրաչափութիւն, զԲնական Պատմութիւն և զԲնական Խմանտասիրութիւն: Ընտրութիւն և կամ ելանելն ի պաշտօնէ Առաջին Անգղիական Վարժապետին, լիցի հաւանութեամբ ընդհանրական ժողովոյ անդամոց ճեմարանին:

2. Besides possessing the qualifications enumerated above, he shall produce satisfactory testimonials of high moral and religious character, and of his cordial acquiescence in all the rules and regulations of the Academy, and of his willingness to conduct the school accordingly.

3. His salary shall not exceed three hundred rupees per month.

4. It shall be the duty of the Rector to see through the whole course of the management of the school, and to take care that the rules and regulations contained herein, are, in all cases, properly and strictly attended to. Any instance of deviation from the established rules, shall be made known by the Rector to the first manager.

5. Besides attending to the duties of his scholastic profession, he shall always visit the dormitory of the children in order to see that every thing there is kept in a state of cleanliness and order, and shall enforce the observance of the rules and regulations of the institution by its office-bearers and servants.

6. There shall be a second Master, whose salary shall not exceed one hundred rupees per month.

7. His election and appointment shall rest with the managers. He shall be an Armenian by birth and faithfully conform to the creed and doctrines of the church of Armenia. He shall produce satisfactory testimonials of literary attainments, and of high moral and religious character. He shall be capable of giving instruction to the junior boys.

8. Besides attending to the duties of educating the classes entrusted to him, he shall be present at dinner hour with the boarders in the school in every other week, and shall teach them order and decorum.

9. If necessary, an assistant teacher shall be employed, whose salary shall not exceed fifty rupees per month. He shall be an Armenian by birth, and faithfully conform to the creed and doctrines of the church of Armenia.

10. His election and appointment shall rest with the managers. He shall produce testimonials of moral and religious character, and of ability to give instruction to little children.


11. He shall, after the termination of his labor of instruction, and during the interval in which the boys are engaged in their English studies, assist the purveyor of the school in writing accounts and such other things, as may be given to him.

CHAPTER V.

The First English Master, &c.

1. The First English Master shall belong to the Church of England. He shall be capable of giving instruction in English, Latin, Geography, History, Use of the Globes, Arithmetic, Geometry, Natural History, and Natural Philosophy. His election, as well as relinquishment of office, shall rest with the general meeting of the members of the institution.

- 2.- Բաց ի վերոյին կատարելութեանց, տացէ բաւական վկայականս բարի վարուց և բարեպաշտութեան, և սերտ հաւանութեան իւրոյ ընդ ամենայն կարգս և կանոնս դպրոցին, և յօժարութեան իւրոյ առաջնորդել նմա ըստ այնոցիկ:
- 3.- Վարձ նորա մի Լիցի աւելի քան զերես հարիւր ռուփիս առ ամիս:
- 4.- Եղիցի երկրորդ վարժապետ, որոյ վարձ մի Լիցի առաւել քան զհարիւր ռուփիս առ ամիս:
- 5.- Կարգեսցի այս ի հոգաբարձուացն. եղիցի հետևող Եկեղեցւոյն Անդղիոյ, և տացէ բաւական վկայականս բարի վարուց և բարեպաշտութեան, և կարողութեան ուսուցանելոյ զսովորական մասունսս հրահանգութեան, և առաջնորդելոյ ստորին աստիճանաց յանձնելոց նմա:
- 6.- Սա բաց ի հրահանգելոյ, ի ժամու ճաշու ներկայ Լիցի ընդ բնակիչ մանկանցն յամենայն փոփոխ եօթնեկի, և ուսուսցէ նոցա բարեկարգութեամբ և ըստ ծիսի վարիլ:
- 7.- Եթէ հարկաւոր Լիցի, կարգեսցի օժանդակ ուսուցիչ մի, որոյ վարձ մի Լիցի աւելի քան զյիսուսն ռուփիս առ ամիս:
- 8.- Կարգեսցի սա ի հոգաբարձուացն. եղիցի հետևող Եկեղեցւոյն Անդղիոյ. տացէ բաւական վկայականս կարող Լիցիելոյ ուսուցանել զփոքրիկ մանկունս, և բարի վարուց և բարեպաշտութեան:
- 9.- Երկրորդ վարժապետքն և օժանդակ ուսուցիչքն յամենայնի հըրպատակ կացցեն գլխաւոր և առաջին վարժապետաց քստ կարգաց և կանոնացն:
- 10.- Եթէ հարկաւոր Լիցիցի, Մուսշի և Պնդիտ մի կարգեսցին առ ի ուսուցանել զՊարսիկ և զՀնդիկ Լեզուս. յորոց միոյ վարձն մի Լիցի աւելի քան զռուփիս 16 առ ամիս:



ԳԼՈՒԽ Զ.

Վ ա Ր ժ ա պ ե տ ու Տ ի ք

- 1.- Եղիցի Հայ վարժապետուհի մի, որոյ վարձ մի Լիցի աւելի քան զերեսունն ռուփիս առ ամիս:
- 2.- Կարգեսցի ի հոգաբարձուացն. Լիցի ազգաւ Հայ և դաւանութեամբ հաւատարիմ վարդապետութեանց սբ. Եկեղեցւոյն Հայաստանեայց օպարտի տալ բաւական վկայականս վարուց և բարեպաշտութեան, և կարողութեան ուսուցանելոյ Հայերէն զՔերականութիւն, զգրել և զասղանագործութիւն:
- 3.- Ընկալցի զօգնութիւն զժամ մի ի Հայ գլխաւոր վարժապետէն յառաջնորդութիւն իւր ի հրահանգութեան յամենայն փոփոխ աւուր:
- 4.- Յուսուցանել իւրում պարտի միշտ Հայերէն խօսել առանց խառնելոյ զայլազգական բառս:

2. Besides possessing the above mentioned qualifications, he shall furnish satisfactory testimonials of high moral and religious character, and of his acquiescence in all the rules and regulations of the institution, and of his willingness to conduct the school accordingly.

3. His salary shall not exceed three hundred rupees per month.

4. A second master shall be employed, whose salary shall not exceed one hundred rupees per month.

5. His election and appointment shall rest with the managers. He shall belong to the Church of England. He shall produce satisfactory testimonials of high moral and religious character, and of ability to instruct the junior classes instructed to him in the usual branches of scholastic studies, and to conduct them accordingly.

6. After the termination of his labor during school hours, he shall be present at dinner with the boarders in the school in every other week, and teach them order and decorum.

7. If necessary, an assistant teacher shall be employed, whose salary shall not exceed fifty rupees per month.

8. His election and appointment shall rest with the managers. He shall belong to the Church of England. He shall produce satisfactory testimonials of moral and religious character, and of ability to instruct little children.

9. The second masters and assistant teachers shall obey the Rector and the first English master, conformably to the rules and regulations.

10. If necessary, a Moonshie and a Pundit shall be employed to instruct the boys in Persian and Bengali. The salary of each of them shall not exceed sixteen rupees per month.

C H A P T E R VI.

Mistresses.

1. There shall be an Armenian Mistress, whose salary shall not exceed thirty rupees per month.

2. Her election and appointment shall rest with the managers. She shall be an Armenian by birth, and faithfully conform to the creed and doctrines of the Church of Armenia. She shall furnish satisfactory testimonials of high moral and religious character, and of ability to give instruction in Armenian grammar, writing and needle-work.

3. She shall, on alternate days, receive assistance, for an hour, from the head Master or Rector of the institution in the discharge of her scholastic duties.


5*- Եղիցի Անգղիական վարժապետուհի մի Եւրոպացի, որոյ վարձ մի Լիցի աւելի քան զհարիւր ուսփիս առ ամիս:

6*- Ընտրութիւն և կամ ելանելն ի պաշտօնէ սորա Լիցի հաւանութեամբ ընդհանրական ժողովոյ անդամոց ճեմարանին: Հետևող Լիցի Եկեղեցւոյն Անգղիոյ: Տացէ բաւական վկայականս կարողութեան և փորձոյ հրահանգելոյ Անգղիերէն, և բարի վարուց և բարեպաշտութեան:

7*- Կարող Լիցի ուսուցանել զՔերականութիւն, զգրել, զթուաբանութիւն, զԱշխարհագրութիւն զընդհանուր սկզբունս Պատմութեանց Հռովմայ, Յունաստանի, Իրիտանիոյ և Հնդկաստանի, և զբնական Պատմութիւն. ևս և զպարզ և զարդարուած ասղանագործութիւն և զհիւսուած:

8*- Յամենայն ժամ Անգղիերէն խօսեսցի ընդ մանկանցն, առանց երբէք ի կիր առնելոյ զայլազգական բառս:

9*- Սա բաց ի հրահանգելոյ, ունիցի ընդհանուր կառավարութիւն աղջկանցն ի դպրատանն, և զգուշացի զի բարեպէս և վայելչապէս ընթացայցեն յամենայնի:



ԳԼՈՒԽ Է

Յաղագս Ուսմանց և Հրահանգաց

1*- Որչափ և հար իցէ, մանկանց հրահանգութիւն յարմարեսցի նախկին դիտման ուսումնարանին. այսինքն, ընդունակ առնել զնոսա առ ի գտանել զօրինաւոր միջոցս ապրուստի ի թողուլ իւրեանց զճեմարանն:

2*- Մանկունքն ուսցին Հայերէն, զՔերականութիւն, զԳրչութիւն, զթուաբանութիւն, զՊատմութիւն, զԲնական Պատմութիւն և զԻմատասիրութիւն բարոյական. և Անգղիերէն, զՔերականութիւն, զԳրչութիւն, զթուաբանութիւն, զԱշխարհագրութիւն, զՊատմութիւն զՈւսումնականութիւն, զՊատմութիւն բնական, զԻմաստասիրութիւն մեքենական. և զԼեզուս Պարսից և Հնդկաց, եթէ ցանկալի Լիցիցի:

3*- Աղջկունքն, բաց յուսանելոյ զվերագոյն մասունսն, ի բաց թողլով զուսումնականութիւն, զմեքենական իմաստասիրութիւն, և ըզլեզուս Պարսից և Հնդկաց, ուսցին զպարզ և զարդարուն ասղանագործութիւն և զհիւսուածս:

4*- Մի ուսուցեսն ի դպրոցի անդ զգիրս հակառակ կանոնաց և վարդապետութեանց և ընդունելութեան Եկեղեցւոյն Հայոց:

4. In imparting instruction she shall invariably speak Armenian, without any admixture of foreign words.

5. A European Mistress shall be employed in the English department, whose salary shall not exceed one hundred rupees per month.

6. Her election, as well as relinquishment of office, shall rest with the general meeting of the members of the institution. She shall belong to the Church of England. She shall furnish satisfactory testimonials of high moral and religious character, as well as of ability and experience in teaching the English language.

7. She shall be capable of giving instruction in Grammar, Penmanship, Arithmetic, Geography, in the general outlines of the histories of Greece, Rome, England and India, in Natural History, in plain and ornamental needlework and carpeting.

8. She shall invariably speak English with the children without making use of foreign words.

9. Besides her duties of instruction, she shall be entrusted with the general management of the girls in the school, and shall take care to see all and every thing properly and decently managed and conducted.

C H A P T E R VII.

Of Education.

1. The system of education pursued at the school shall, as much as possible, accord with the original design and main object of the institution, that is to say, the adaptation of the pupils to fill respectable situations in order to gain their livelihood immediately after their quitting the institution.

2. In the Armenian department, the boys shall be instructed in Grammar, Penmanship, Arithmetic, History, Natural History and Moral Philosophy; and in the English department, they shall be educated in Grammar, Penmanship, Arithmetic, Geography, History, Mathematics, Natural History and Mechanical Philosophy. Persian and Bengali shall also be taught, if desired.


3. The girls, besides being instructed in the above mentioned branches of education - with the exception of Mathematics, Mechanics, Persian and Bengali - shall learn plain and ornamental needle work and carpeting.

4. No books shall be introduced or read in the school, that shall be contrary to the canons, doctrines and tenets of the Church of Armenia.

ԳԼՈՒԽ Ը.

Կանոնք վասն բաժանման ժամանակի և այլն

- 1.— Մանկուքն յամենայն առաւօտու զարթիցեն ի ժամու արձակման թնդանօթին* և յետ Լուանալոյ և ազանելոյ զհանդեձս, թոյլ տացի նոցա խղալ ի բակի անդ մինչև ցհնչումն զանգակին առաւօեան աղօթից:
- 2.— Ի սկզբանէ Ապրիլի մինչև ցսկիզբն Հոքտեմբերի, առաւօտեան աղօթից զանգակն հարցի ի վեցերորդ և կէս ժամու* և ի սկզբանէ Հոկտեմբերի մինչև ցառաջներորդն Ապրիլի, յօթներորդին:
- 3.— Զկնի աղօթից, նախաճաշկի զանգակն հնչեսցի յութներորդ ժամուն:
- 4.— Յուլի կէս ժամուն ուսման զանգակն հարցի, և մանկուքն ի դպրոցի անդ մինչև ցժամն երկրորդ մնացեն* ապա աւարտման զանգակն հնչեսցի, զկնի միոյ ժամու ճաշու զանգակն հնչեսցի:
- 5.— Զկնի ճաշուն արձակութիւն ընկալցին մանկուքն խղալ մինչև ցերեկոյանալ* ապա աղօթից զանգակն հնչեսցի* և յետ այնորիկ կերիցեն զընթրիս իւրեանց:
- 6.— Մեկնեսցին մանկուքն յանկողինս իւրեանց միշտ ի ժամու արձակման թնդանօթին ընդ տարին ողջոյն:
- 7.— Մանկուքն ուսցին Հայերէն և Անգլիերէն յամենայն աւուր* Այլ այսուհետև, եթէ հոգաբարձուքն բարի համարեսցին առնել նորոգ փոփոխութիւնս ժամանակի սակս ուսման, կարող լիցին:
- 8.— Յերկուշաբաթէ մինչև ցշաբաթ, յամենայն օթնեկի մինչև ցերկորդ ժամն ուսցին* իսկ յաւուրս շաբաթուց մինչև ցկէսօր միայն:
- 9.— Յայնսիկ ժամանակս, յորս Հայերէն ուսանին, պարտին Հայերէն խօսիլ, զի բարւոք և անսխալ ուսցին զմայր Լեզու իւրեանց* իսկ յորժամ Անգլիերէն ուսանին, պահանջեսցի ի նոցանէ Անգլիերէն խօսիլ:
- 10.— Յաւուրս շաբաթուց ուսումն վերջացի Հայկական աղօթիւք, որ ըստ սովորութեան ընթերցեալ Լինի ի ճեմարանի յայնմ աւուր:
- 11.— Հանգամանք եղանակի ուսուցանելոյ, թէ Հայերէն և թէ Անգլիերէն, որպիսի են բաժանումն մանկանց յաստիճանս, պէսպէս մասուքն, զորս պարտիցէ ուսուցանել իւրաքանչիւր աստիճանաց, թողցի գլխաւոր և առաջին վարժապետացն:



ԳԼՈՒԽ Թ.

Աւուրք Արձակութեան

- 1.— Յաւուրս շաբաթուց աշակերտքն ընկալցին զուսումն մինչև ցկէսօր:
- 2.— Կանոնաւոր աւուրք արձակութեան եղիցին 10 աւուրք ի Զատիկին, սկսեալ յԱւագ Երկուշաբաթէն* 21 աւուրք ի Տօնի Ծննդեանս Քսի* յետ տարեկան ընդհանրական հարցաքննութեան, սկսեալ 11 Յուլիարի մինչև ցվերջ ամսոյն* 3 աւուրք ի Բարեկենդանին* Մի օր ի Տօնի Համբարձման* և զայլ չորս աւուրք թողլով ի կամս Հայ գլխաւոր վարժապետին, զի ըստ հաճոյս արձակուրդ տացէ մանկանցն յայն չորս աւուրքս ի տարին ողջոյն:

C H A P T E R VIII.

Rules about the distribution of Time, &c.

.....


1. The children shall rise every morning at gun fire; and after having bathed and dressed, they shall be allowed to play on the premises till the bell rings for morning prayers.
2. From the first of April to the first of October the bell for morning prayers shall ring at half past six o'clock, and from the first of October to the first of April, at seven o'clock.
3. After prayers, the bell shall ring for breakfast at eight o'clock.
4. At half after eight o'clock the bell shall ring for school, where the children are to remain till two o'clock, when the bell shall ring for the termination of their studies. After an hour the bell shall ring for dinner.
5. Dinner being ended, the boys shall be permitted to play on the premises till dusk, when the bell for evening prayers shall ring, after which they shall have their supper.
6. The children shall retire to bed at gun fire all the year round.
7. The children shall learn Armenian and English every day. It shall, however, be discretionary with the managers to introduce new alterations respecting the divisions of time for studies.
8. From Monday till Saturday, in every week, the scholastic studies shall extend till two o'clock, but on Saturdays, only till noon.
9. The pupils shall, when employed in their Armenian studies, speak Armenian, in order that they may acquire a correct knowledge of their mother tongue. But, when engaged in their English studies, they shall be required to talk only English.
10. On Saturdays the studies of the children shall terminate with the usual Armenian prayer, read in the school on that day.
11. The details of imparting instruction, both in the Armenian and English departments, such as the division of the boys into classes, and the different branches to be taught to each class shall be left to the Rector and the first English master of the Academy.

C H A P T E R IX

Holidays.

1. Saturdays shall be half Holidays.
2. The regular Holidays of the School shall be ten days at Easter, beginning on the Monday of Passion week; twenty-one days at Christmas, commencing on the 11th January, immediately after the annual general examination, till the end of that month; three days at Shrovetide, and one day on Ascension-day. In addition to these, it shall be discretionary with the Rector to give to the boys of the school a further Holiday of four days throughout the whole year.

3*- Բաց յաւուրցն նշանակելոյ ի վերոյ, յերկրորդ աւուր Ապրիլի ամսոյ եղիցի արձակուրդ առ յիշատակի հաստատութեան շեմարանին, եբրե յաւուր յայնմիկ. և մի օր ևս յԱւագ Ուրբաթու Անգղիացւոց. մի օր ի Տօնի Եննդեան Գրիստոսի, և մի օր ի Նոր Տարւոյ Անգղիացւոց:




ԳԼՈՒԽ Ժ.

Երթեւեկութիւն Մանկանց և Ընտանեաց

1*- Թողացուսցի ծնողաց, խնամածուաց և բարեկամաց մանկանցն գալ ի տեսութիւն նոցա յամենայն շաբաթու աւուր զկնի միջօրէի. և ի ժամանակս ուսմանց յամենայն աւուրս, իսկ այլ ժամանակս մի թոյլ տացի նոցա բնաւ մտանել ի բակ դպրոցին, — եթէ ոչ կոչեսցին անդր ի հոգաբարձուացն — առանց յատուկ թոյլտուութեան երէց կամ առաջին հոգաբարձուին:

2*- Թողացուսցի մանկանցն երթալ յայցելութիւն ընտանեաց իւրեանց յառաջներորդ կիւրակէի իւրաքանչիւր ամսոյ, և յամենայն աւուրս արձակութեան, բայց մի առանց խնդրոյ նոցա:

3*- Յորժամ հրաման տացի նոցա երթալ ի դուրս, պահանջեսցի ի ծնողաց և ի խնամածուաց նոցին խոստանալ, զի դարձեալ բերցեն զնոսս ի դպրոցն ի նշանակեալ ժամանակին. և եթէ Լուծանիցեն զխոստումն իւրեանց, տալ զպատճառ բաւական ի մասին վարձատու բնակիչ աշակերտացն. իսկ սակս ձրի բնակիչ աշակերտացն եթէ ոչ տացի պատճառ բաւական, երկիցս անգամ շնորհս այս մի պարգևեսցի նոցա վերստին:



ԳԼՈՒԽ ԺԱ.

Պարգևք և Պատիժք և այլն

1*- Ըստ սովորութեան եղիցի ընդհանրական հարցաքննութիւն աշակերտաց շեմարանին ի տասներորդ աւուր Յունվարի ամսոյ յիւրաքանչիւր տարւոյ: Հոգաբարձուքն խնդրեսցեն առնել քննութիւն ի նոցանէ որք կարողք իցեն քննել. և հասարակութիւնն հրակիրեսցի առ այն:

2*- Եղիցի այլևս հարցաքննութիւն մանկանցն ի ներկայութեան հոգաբարձուացն և քանի մի բարեկամաց և նշանաւորեալ այցելուաց, զոր նոքա կամիցին բերել ընդ ինքեանս, չորիցս անգամ ի տարին ողջոյն. այսինքն յերեսներորդ աւուր Մարտի, յերեսներորդ աւուր Յունիսի, յերեսներորդ աւուր Սեպտեմբերի, և յերեսներորդ աւուր Դեկտեմբերի. յորժամ տնօրէնութեամբ վարժապետաց, պատրաստեսցի ցուցակ մի աշակերտացն ըստ իւրաքանչիւր աստիճանաց, ծանուցանելով զամենայն վարս և յառաջդիմութիւնս մանկանցն, զոր արարեալ իցեն յանցեալ երիս ամիսս: Եթէ վերոյիշեալ աւուրքն Լինիցին կիւրակէ, ուրեմն ի հետագայ երկուշաբաթի եղիցի հարցաքննութիւնն:

3. Besides the above, the anniversary of the institution, the 2nd of April, shall be a Holiday, and shall be observed by the boys as a remembrance of the foundation of the Academy. There shall also be a vacation in the school, on English Good-Friday, Christmas-day and New Year's day.

C H A P T E R X.

Intercourse of the children with relatives, &c.

1. The parents, guardians and friends of the children shall be permitted to visit them on every Saturday in the afternoon, and on every day during school hours; but they shall, at no other time, be allowed to enter the school premises (unless called thither by the managers) without express permission from the first manager.

2. The children shall be permitted to visit their relatives on the first Sunday of every Month, and during all the Holidays, but not without their request.

3. When they are permitted to go out, their parents or guardians shall be required to promise that they will bring them back to the school within the prescribed time; and in case of a violation of their promise, to assign sufficient reason respecting their late return, if paying boarders, but in no case, in which the promise is violated, shall the indulgence be renewed with regard to non paying boarders, unless a satisfactory excuse is given for the same.

C H A P T E R XI.

Rewards and Punishments, &c.

1. In accordance with the established practice, a general examination of the pupils of the institution shall annually be held on its premises on the tenth of January. The managers, as well as the Rector and the first English master shall request such gentlemen to take an active part in the examination, as shall be deemed competent for the task. The public shall also be invited to be present on the occasion.

2. Four quarterly examinations shall also be held, respectively on the 30th March, 30th June, 30th September and 30th December during the year, which shall be attended by the managers and the visitors, accompanied by such friends as they may choose to bring. On these occasions the masters shall prepare a general list of the various classes of the pupils, descriptive of their respective department, and of the progress made by them during the preceding three months. If the above mentioned days happen to fall on Sundays, the examination shall be held on the following Monday.

3.- Պարզեք բաղկացեալ ի մետաղաց, ի գրոց և այլն, բաշխեսցին ի հոգաբարձուացն կամ յայլոց, զորս նոքա կարգեսցեն փոխանակ իւրեանց, յաւուր տարեկան ընդհանրական հարցաքննութեանն, ոչ միայն վասն գիտութեանն, այլ նաև վասն բարի վարուց առանց աչառութեան:

4.- Արտաքսումն ի դպրոցէն լինի պատիժն տուեալ ի դէպս սաստիկ ինչ գործոյ անբարոյականութեան, և անուղղայ ունակութեան, զանցառութեան և մոլութեան • այլ այս պատիժ մի տացի առանց վաւերութեան հոգաբարձուացն • որոց իրեկտորն կամ գլխաւոր վարժապետն ծանուցցէ զանցսն:

5.- Առնուլ զանուն Աստուծոյ ընդունայն, երդնուլ, սուտ խօսել, թշնամանել, կարգալ իրերաց անուանս նախառականաց, և ի կիր առնուլ զանվայելուչ բռնս, պատժեսցին ըստ արժանեաց:

— 000000 —

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հանդերձք բնակիչ աշակերտաց:

1.- Մանկունքն փոխեսցեն զհանդերձսն իւրեանց յամենայն աւուր երկրորդի ընդ ամն ողջոյն:

2.- Իւրաքանչիւր ոք ընկալցի ամի ամի երկուսասն սարս զգեստուց, այսպէս, 12 շապիկս, 12 զոյգ վարտիս —պէնտուրն—, 12 տաւատոկս, —ջակէթ— հանդերձ միով առաւեայ տաւատոկաւ և զոյգ մի ստուեայ վարտեօք սակս ձմերանս:

3.- Ամենայն ոք ընկալցի առանձին մահիճս և զանկողինս, զմի բարձ գլխոյ, զմի վերարկու վասն ձմերանս, զմի կտաւեայ սպիտակ ծածկոյթ, որ փոխեսցի երկիցս անգամ յեօթնեկի:

4.- Ամենայն ոք ընկալցի զմի զոյգ կօշիկս յամենայն ամսի ծախուք ճեմարանին:

— 000000 —

ԳԼՈՒԽ ԺԳ.

Կերակուր և այլն.

1.- Կերակուր դպրոցին լինի ի կառավարութեան տնտեսին, որ պահեսցէ զօրական համար ծախուցն, և դիցցէ զայն առաջի Հայ գլխաւոր վարժապետին կամ իրեկտորին յամենայն աւուր, առ ի գտանել զձեռնագրութիւնն նորին վասն ուղղութեան այնորիկ, նաև վասն յայտարար հաւանութեանն նորուն ընդ որպիսութիւն և ընդ որքանութիւն իրացն:

2.- Հացավաճառ և կաթնավաճառ մի տացեն հաց, կաթն և կոզի օր ըստ օրէ, ըստ գնոց հաստատելոց ի Հայ գլխաւոր վարժապետէն և իրեկտորէն, առնելով ի տնտեսէն ստացականս վասն այնոցիկ, որ վերստին տացին նմա յառաջներորդ աւուր հետագայ ամսոյն, յորժամ գինքն վճարեսցին:

3. Rewards, consisting of medals, books and other articles shall fairly be distributed by the managers or others nominated by them to act in their room, on the day of the annual general examination, not only for proficiency, but also for good behaviour.

4. Expulsion from the school shall be the penalty inflicted in case of any flagrant act of immorality, and of incorrigible habits of negligence or vice; but this shall not be done without the sanction of the managers, to whom every such occurrence shall be made known by the Rector of the institution.

5. To take God's name in vain, to swear, to tell fibs, to use abusive language, to call each other nicknames, and to utter improper words, shall be visited with due severity.

C H A P T E R XII.

Clothing of Boarders.

1. The clothing of the children shall be changed every second day all the year round.

2. Each boy in the school shall be furnished with twelve suits annually, consisting of twelve shirts, twelve pairs of pantaloons and twelve jackets, and a woollen jacket and a pair of pantaloons for the cold season.

3. Every boy in the school shall have one pair of shoes every month at the expense of the institution.

4. Each boy shall be furnished with a separate bed, consisting of a cot, a pillow, a quilt for the cold weather, and a white cotton sheet, which last shall be changed twice a week.

C H A P T E R XIII.

DiETING, &c.

1. The dieting of the school shall be conducted by a purveyor, who shall keep a daily account of expenditure, and place it before the Head Master or Rector every day, in order to obtain his countersignature for its correctness, with a declaration that he has seen and approved of the whole of the articles charged for, both as to quantity and quality

2. A baker and milkman shall daily supply bread, milk and butter, at rates fixed upon by the Armenian Head Master or Rector, receiving from the purveyor receipts for the same, which shall again be returned to him on the first of the following month, when their bills are paid.

3- Բրինձ, իւղ, այրելի փայտ, և ձէթ, որքան և հարկաւոր իցեն, գնեսցին ի տնտեսէն միանգամայն ի սկզբան ամենայն ամսոյ, կամ յորժամ պէտք իցեն, ըստ գնոց և ըստ որպիսութեանց ընդունելի եղելոց Հայ գըլ-խաւոր վարժապետին կամ Ռեկտորին* յորոց օր ըստ օրէ տնտեսն չափով տացէ ծառայիցն, պատասխանատու լինելով վասն պակասութեան նոցին:

4- Մանկունքն կերիցեն ամենեքեան զկերակուր իւրեանց ի մի և նոյն սրահի:

5- Հետագայ աղիւսակ կերակրոյ միշտ ճշդիւ հաստատուն մնացէ այնպիսի դուզնաքեայ փոփոխութեամբք, զորս երբեմն երէց հոգաբարձուն և բժիշկն հարկաւոր համարեսցին, հիւանդ մանկունքն ուտելով յամենայն ժամ զոր ինչ հրամայեալ լիցի նոցա:

Երկուշաբաթի

Ոչխարի միս խորոված, բանջարեղէն* բրինձ խարշեալ, հաւու կերակուր, —կառի—, պատառ մի հացի և փոքր ինչ միրգ իւրաքանչիւրոց:

Երեքշաբաթի

Ոչխարի կամ ուլու մսոյ կերակուր* բրինձ խարշեալ, մաշ—դաւ—, պատառ մի հացի և փոքր ինչ միրգ, իւրաքանչիւրոց:

Չորեքշաբաթի

Հաւ կամ բադ, —օրդակ— խորոված, բանջարեղէն, փլաւ ոչխարի մսոյ կերակուր, պատառ մի հացի և փոքր ինչ միրգ իւրաքանչիւրոց:

Հինգշաբաթի

Որպէս յերկուշաբաթի :

Ուրբաթ

Որպէս յերեքշաբաթի

Շաբաթ

Հաւ խորոված, բանջարեղէն, փլաւ, ոչխարի մսոյ կերակուր, պատառ մի հացի և փոքր ինչ միրգ, իւրաքանչիւրոց:

Կիրակի

Արջառոյ միս խարշեալ կամ խորովեալ, բանջարեղէն, հաւու կերակուր, բրինձ խարշեալ, պատառ մի հացի և փոքր ինչ միրգ իւրաքանչիւրոց:

Վասն նախաճաշկի, հաց կոգի, և չայ, յաւելմամբ տապակած ձկան և խարշած բրնձոյ յառաւօտս կիւրակէից* և երբեմն թերախորով ձու, աղեալ միս արջառոյ եփեալ իւղով —ղաւուրմայ— և այլն: Վասն ընթրեաց, հաց և կոգի, և թասիւ միով թէյ և կաթն յամենայն առուր ի տարին ողջոյն:

3. Such quantities of rice, ghee, fire-wood and oil, as may be required, shall at once be purchased by the purveyor in the beginning of every month, or when deemed necessary, in accordance with a declaration of the Armenian Head Master or Rector, that he has approved of both their respective value and quality. Of the articles thus purchased, sufficient portions for daily use shall be given to the servant by the purveyor, who shall be held responsible for any deficiency.

4. All the children shall receive their meals in the same apartment.

5. The following table of diet shall be strictly adhered to, with such trifling alterations as may from time to time be considered necessary by the first manager and the physician of the institution; sick children receiving at all times whatever he may order for them.

MONDAYS.

Roast mutton, vegetables, boiled rice, fowl curry, a portion of bread and fruit to each boy.

TUESDAYS.

Mutton curry, boiled rice, doll, a portion of bread and fruit to each boy.

WEDNESDAYS.

Roast fowls or ducks, vegetables, pillau, mutton curry, a portion of bread and fruit to each boy.

THURSDAYS.

The same as Monday.

FRIDAYS.

The same as Tuesdays.

SATURDAYS.

Roast fowls, vegetables, pillau, mutton curry, a portion of bread and fruit to each boy.

SUNDAYS.

Beef, boiled or roast, vegetables, fowl curry, boiled rice, a portion of bread and fruit to each boy.

For breakfast, bread, butter and tea, with the addition of fried fish and boiled rice on Sunday mornings; and sometimes boiled egg, broiled beef, &c. For supper, bread and butter, with a cup of tea and milk all the year round.

ԳԼՈՒԽ ԺԴ*

ԲԺԻՉԿ և աՅԼՆ

1*- Եղիցի Եւրոպացի բժիշկ մի, որոյ վարձ հանդերձ դեղորէիւքն մի Լիցի աւելի քան զերեք հարիւր ռուփիս ի տարին:

2*- Սենեակ մի ի վերին դասիկոնի ճեմարանին Լիցի անկելանոց կամ հիւանդանոց ի պէտս հիւանդ մանկանց:

— 000000 —

ԳԼՈՒԽ ԺԵ*

Տպարան

1*- Ճեմարանի տպարանն միշտ պահեսցի ի վիճակի նորոգութեան և պատրաստութեան:

2*- Մի տպեսցի առասպելք կամ կելծեալ պատմութիւնք, և մի այլ պիսի մատեանք, յորս իցեն բանք հակառակ վարդապետութեան սուրբ Եկեղեցւոյն Հայաստանեայց:

3*- Մի ինչ տպեսցի առանց վաւերութեան հոգաբարձուացն:

4*- Եթէ հոգաբարձուքն զանձինս բաւական ոչ համարեսցին, որ ինչ տպելի իցէ, առաջի դիցեն ի քննութիւն գոնէ երից անձանց կարողաց ընտրելոց ի նոցանէ:

5*- Կառավարութիւն տպարանին եղիցի ի ձեռս Հայ գլխաւոր վարժապետին կամ Ռեկտորին:

— 000000 —

ԳԼՈՒԽ ԺԶ*

Ստացուածք

1*- Պարտ է հոգաբարձուացն շահայ մէջտ դուրս տպարանին անհարանիս յառաջացուցանել, այնպէս կարգելով գործամս նորա, զի եկամուտ նորին առաւելցի:

2*- Պատրաստ դրամք, մուրհակք տէրութեան, և յետկարգ ուխտի պահեսցին զգուշութեամբ յերկաթի արկեղ դպրոցին* որոյ եղիցին գոնեայ երկու բանալիք, մի ի ձեռս երէց հոգաբարձուին իսկ միւսն ի ձեռս երկրորդին:

3*- Հոգաբարձուքն պատասխանատու եղիցին անբամոց ճեմարանին վասն կորստեան ստացուածոց եղելոց ի ձեռս նոցա, եթէ վնասն անզգուշութեամբ նոցա Լինիցի:

4*- Ամսական վարձք մանկանցն ստացեալ Լիցին կարգաւ ի Լրման ամեայն ամսոյ, և եթէ մինչև ցաւարտ յետագայ ամսոյ ոչ վճարեսցին, մանկուսնք չվճարողացն մի ընկալցին վերստին ի ճեմարանն ի սկսանել երրորդ ամսոյ, մինչև հատուցեն նոքա զգումար անհատոյց յետկարացն:

5*- Ի բովանդակիլ թողովեալ դրամոյն ի մի հազար ռուփիս, պարտին հոգաբարձուք ճեմարանին անյապաղ ապահովել զնոյն գումար ի մուրհակս տէրութեան Արևելեան Հնդկաց Ընկերութեան:

6*- Կոչք և կարասիք ճեմարանին մի բնաւ յանօթ տացին աՅԼոց:

— 000000 —

ԳԼՈՒԽ ԺԷ*

Այցելուք ճեմարանին

1*- Եղիցին երկու այցելուք Հայերէն, արք պատուաւորք և կատարեալք ի Մարդասիրական ճեմարանին* և երկու այցելուք Անգլիերէն, արք երեւելիք և գիտնականք: Ընտրութիւն սոցա Լիցի ի հոգաբարձուացն Մարդասիրական ճեմարանին:

C H A P T E R XIV.
Physician, &c.

1. A European physician shall be employed, whose allowance, medicines included, shall not exceed three hundred rupees annually.
2. A room in the upper apartment of the institution, shall be converted into a hospital, for the accommodation of sick children.

C H A P T E R XV.
Printing Establishment.

1. The press of the institution shall always be kept in a proper and efficient state.
2. No immoral or fictitious tales shall be printed in the school press, nor any book or books that shall be contrary to the canons and doctrines of the church of Armenia.
3. Nothing shall be printed therein without the sanction of the managers.
4. Should the managers consider themselves incompetent to pass an opinion or any work proposed to be printed, they can submit the same to the consideration of at least three able persons elected by them for the task.
5. The management of the press shall rest with the Armenian Head Master or Rector.

C H A P T E R XVI.
Funds.

1. The managers shall use their best endeavours to promote the welfare of the institution, by making such an application of its funds, as shall be conducive to the increase of its income.
2. Funds in cash, in Company's securities and in bonds, shall be carefully kept in the iron chest of the institution, of which there shall be at least two keys, one remaining in the possession of the first, and the other in the hands of the second manager.
3. The managers shall be responsible to the members of the institution for the loss of the funds remaining in their hands, should the school suffer by their inadvertence.
4. The monthly schooling of the pupils shall be regularly received at the end of the month; and if the payment be delayed to the close of the second month, the children of the defaulters shall not be admitted into the school in the beginning of the third month, until the amount of the unpaid bills is discharged.
5. When the collected sums amount to one thousand rupees, the managers shall, without loss of time, invest the amount in Promissory Notes of the local government.
6. No furniture or articles shall, on any account, be lent from the school to others.

C H A P T E R XVII.
Visitors of the Institution.

1. Two respectable and accomplished gentlemen shall be appointed visitors of the institution, for the Armenian department; and two eminent and learned gentlemen for the English department. The right of their election is vested in the managers.
2. The visitors shall attend the school once in every month, or oftener if possible, in order to look over the progress and proficiency of the pupils of the Armenian Philanthropic Academy.
3. Both the managers and the visitors of the institution shall have a right to introduce such plans and alterations into the school, as shall be deemed conducive to the efficiency of the system of tuition and the details of the studies of the pupils, as well as to their general proficiency.

2*- Յիւրաքանչիւր ամսի միանգամ կամ աւելի ևս, եթէ հնար իցէ, այցելուքն եկեսցեն ի ճեմարանն առ ի վերահասու Լինել յառաջդիմութեան և ուսմանց աշակերտաց Մարդասիրական ճեմարանին:

3*- Թէ հոգաբարձուքն և թէ այցելուք Մարդասիրական ճեմարանին ունիցին արտօնութիւն առնել զայնպիսի առաջադրութիւնս և փոփոխութիւնս որ Լիցին յօգուտ եղանակի և մասանց հրահանգաց աշակերտաց ճեմարանին, և սատար հանրական յառաջդիմութեան նոցին:

-----000000-----

ԳԼՈՒԽ ԺԸ.

Սպասահարկուք և Ծառայք

1*- Եղիցի տնտես մի, որոյ վարձ մի Լիցի աւելի քան զքսան և հինգ ուսուփիս առ ամիս:

2*- Կարգեսցի ի հոգաբարձուացն. Լիցի ազգաւ Հայ և դաւանութեամբ հաւատարիմ վարդապետութեանց սբ. Եկեղեցւոյն Հայաստանեայց: Տացէ բաւական վկայականս յոյժ բարի վարուց և բարեպաշտութեան և կարողութեան պահելոյ զհաշուեգիրս:

3*- Պարտի գու ամուսնացեալ և ունիլ զամուսինքնակեսցի յայնմ կողման դպրոցին, որ ցուցցի նմա յերէց հոգաբարձուէն, և ընկալցի զկերակուր իւր և զգերդաստանին ի հասարակ կերակրոյն պատրաստելոյ վասն մանկանցն:

4*- Պարտականութիւնն նորա եղիցին գնել զուտելիս և զայլ ամենայն օրական հարկաւոր իրս դպրոցին, պահել զպարզ և յստակ կանոնաւոր օրական հաշուեգիրս ծախուց և եկամտից նորա. և յառաջներորդ երկուշաբթի ամենայն ամսոյ, կամ յորում ժամանակի և պահանջեսցի ի նմանէ, դնել զհաշիւն առաջի գլխամբ վարժապետին կամ իրեկտորին վասն քննութեան և վաւերութեան նորա:

5*- Դարձեալ պարտականութիւնն նորին եղիցի տեսանել զի մանկուքն յամենայն առաւօտու յառնեն ի քնոյ ի ժամու արձակման թնդանօթին. և ուսնան, սանտրեն զհերս, և զգետուն զհանդերձս ըստ պատշաճին, և մեկնին յանկողինս իւրեանց ի ժամուն կարգելոյ: Պարտի ուտել հանապազ զկերակուր ընդ մանկանցն ի հասարակ սեղանն, և զգուշանալ ի ժամու նախաճաշկի և ճաշու, զի վայելչապէս վարիցին: Պարտի տեսանել յամենայն աւուր զի մանկանց ննջարանն և ճեմարանն ողջոյն իցեն յստակ, և անկողինք նոցա ի կարգի: Զկնի առաւօտեան պատրաստութեան նոցին պարտի փակեալ պահել ըզննջարանն մինչև ցժամ ննջելոյ նոցուն, առ ի արգելուլ զնոսա ի մտանել անդր ի տուրնջեան: Պարտի զգուշութեամբ պէհել զհանդերձս նոցա ի պահեստի և ի կառավարութեան իւրում: Զէ պարտ խօսել ընդ նոսա ի Լեզու Հնդկաց: Պարտի յամենայնի զանձն կացուցանել օրինակ ճիշդ բարոյականութեան և բարի վարուց: Պարտի քաջ աչալըջութեամբ միշտ բարեպէս ընթանալով կատարել զամենայն հրահայեալս նմա յառաջին հոգաբարձուէն, հպատակ Լինելով հաստատեալ կանոնացն և կարգադրութեանցն:

6*- Պարտի, որպէս տեսուչ գերդաստանին, ընթեռնուլ զկարգեալ առաւօտեան և երեկոյան աղօթսն, կալով ի միջին վայրի երկիւղիւ մեծաւ, և ասելով պարզ, ծանր և Լսելի ձայնիւ. որոյ զկնի կրկնեսցեն զաղօթսն մանկուքն ամենեքեան կանգնեալ:

7*- Մի սաստիկ մարմնաւոր պատիժս տացէ մանկանցն, այլ զարժանիքն իրատու առաջի արասցէ Հայ գլխաւոր վարժապետին կամ իրեկտորին:

8*- Կին, դուստր, ևս և զարգացեալ ուստերք նորա, որ ոչ ուսանին ի դպրոցին, կերիցեն առանձինն ի սենեկի իւրեանց ի կերակրոյն որ պատրաստեսցի վասն մանկանցն հասարակապէս:

9*- Պարտ է տնտեսուհւոյն և իւրեանցայնոցն յամենայն ժամ բարեպէս վարիլ, համեստութեամբ, պարկեշտութեամբ և զգաստութեամբ:

10*- Տնտեսուհւոյն պարտականութիւնն եղիցի ուսուցանել աղջկանցն զասղանագործութիւն, գրել և ընթեռնուլ, եթէ պահանջեսցի ի նմանէ օգնական Լինել յնոյն պէտս:

C H A P T E R XVIII.

Establishment.

1. A purveyor shall be employed, whose salary shall not exceed twenty-five rupees per month.
2. His appointment shall rest with the managers. He shall faithfully conform to the creed and doctrines of the Church of Armenia. He shall produce satisfactory testimonials of high moral and religious character, and of ability to keep books of account.
3. He shall be a married man, and dwell in that quarter of the institution, which shall be shewn to him by the first manager. He and his family shall partake of the usual meals prepared for the boarders.
4. It shall be his duty to purchase eatables and all the daily requisites for the school, to keep simple, clear and regular daily accounts of its expenses and income, and to place them before the Armenian Head Master or Rector on the first Monday of every month, or whenever required by him, for his supervision and sanction.
5. It shall, moreover, be his duty to see that the children do every morning rise at gun fire, wash, comb and dress themselves in a becoming manner, and retire to bed at the appointed hour. He shall always take his meals with the boys at the common boarding table, and take care that the boys conduct themselves properly at breakfast and dinner hours. He shall see every day that the dormitory of the boys and all the school rooms are in a state of cleanliness, and that their cots and bedding are in good order. After the beds are properly arranged in the mornings, the dormitory shall be kept closed until the hour of the boarders going to sleep, in order to prevent their getting admission into it during the day. He shall carefully keep their clothing in his custody and management. He shall never talk to the boys in Hindustani. He shall invariably present himself to them as an example of strict morality and good conduct. He shall in all cases, proceed with circumspection and propriety, and abide by all the directions of the first manager, in obedience to the established rules and regulations.
6. He shall, as overseer of the family, offer the appointed morning and evening prayers, standing in the middle in a becoming posture, and reading the words in a distinct, slow and audible voice. After him all the boys shall repeat the prayers standing.
7. He shall not inflict severe corporal punishment on the children, but bring to the notice of the Armenian Head Master or Rector those deserving correction.
8. His wife, daughter, as well as grown-up sons, who do not learn in the school, shall eat separately in their room, by partaking of the meals generally prepared for the boarders.
9. His wife and family shall invariably conduct themselves with propriety, modesty, moderation and sobriety.
10. It shall be the duty of his wife to teach the girls needle-work, reading and writing, if required to lend her assistance for this purpose.

11*- Մի բնաւ թոյլ տացի տնտեսին և այլոց մուծանել կամ պահել ի դպրատանն զհաւս, զթռչունս, զշունս, զկատուս և զայլ կենդանիս, և կամ զհրացանս և զվառօղս, և կամ թռուծանել զհողմավարս:

12*- Տացէ բանալ և փակել զդուռն ճեմարանին ի ժամու արձակման թնդանօթին յառաւօտու և յերեկոյի:

13*- Մի թողացուցէ մանկանցն կցորդ լինել կամ հաղորդութիւն ունիլ ընդ ծառայիցն:

14*- Մի թոյլ տացի ծառայիցն առնել զօթեակս իւրեանց հասարակ կերակրանոց, առ ի ընդունելոյ յընկերութիւն իւրեանց զբարեկամս արտաքուստ:

15*- Հետագայ ծառայքն պահեսցին ի պէտս դպրոցին* որոց թիւ կարէ առաւելուլ կամ նուազիլ այսուհետեւ ըստ պահանջման պիտոյից:

Մի Հնդիկ նօտար — սարքար — վասն գրելոյ զօրական հաշիւս ի լեզու Հնդկաց և վասն հաւաքելոյ զառնելիս և վճարելոյ զտալիս, առ ամիս ուրփիք 8:

Երկու սպասաւորք վասն ծառայելոյ ի սեղանիմէնմէ, 5:

Մի խոհակեր 5:

Մի օգնական խոհակերի 3:

Երեք կրօղք, մէն մի, 4 ուրփիք, իսկ սուաջինս 5:

Մի հատանող գրչի — դփտրի — 6:

Մի շրբեր 3:


Մի դռնապան 4:

Մի դերձակ 6:

Մի հերահատ 2:

Մի լուացարար և ընկերք իւր, առ ի ստանալ վասն իւրաքանչիւր մանկանս, և վասն տնտեսին և տնտեսուհիս, մէն մի, կէս ուրփի:

Մի աւելածու և ընկեր նորա 6:



ԳԼՈՒԽ ԺԹ.

Արարատեան Գրատուն

1*- Այս գրադարան հաստատեցաւ ի Մարդասիրական ճեմարանին, ի 7 Ապրիլէ 1828:

2*- Գոն այժմ ի գրատանն իբրև մի հազար ընտիր մատենք ի լեզու Հայոց, Յունաց, Լատինացւոց, Գաղղիացւոց Հոլլանդացւոց Պարսից, Սինէացւոց և այլոց արևելեան և արևմտեան ազգաց:

11. The purveyor and others are strictly prohibited from introducing or keeping in the school house poultry, birds, dogs, cats and other animals, fire-works and gun-powder. Flying of kites comes also under this prohibition.

12. The gate of the school house shall be opened and closed at gun-fire in the mornings and evenings.

13. The boys shall not be permitted to mix or have any intercourse with the servants of the school.

14. The servants shall never be allowed to convert their abode into a place of common entertainment by admitting among themselves their friends from abroad.

15. The following servants shall be employed for the institution, whose number shall be increased or deminished as may be necessary hereafter.

One Sircar for writing daily accounts in Bengali, and for collecting bills and making payments	Rs. 8
Two Khidmutgurs, at 5 rupees each	10
One sirdar Cook	5
One Mate	3
Three bearers, one at 5, and the other two at 4 Rs each.....	13
One Duftery	6
One Bheesty	3
One Door-keeper	4
One Tailor	6
One Hair-cutter	2
One Dhobie, with assistants, to receive 8 annas per month for each boarder, as well as for the purveyor and his wife	
One Mahter and one Mahterany	6

CHAPTER XIX.

The Araratian Library.

1. This Library was established in the Armenian Philanthropic Academy on the 7th of April, 1828.

2. At present it contains about one thousand standard works in Armenia, Greek, Latin, French, Dutch, Persian, Chinese and other Oriental and Occidental languages.

3.- Ի միջի Հայկական մատենիցն գոն քանի մի ընտիր ձեռագիրք նախահարցն մերոց երանելեաց:

4.- Վերոյին մատենքն ըստ մեծի մասին են պարգևք Հայրենասէր Հայ գրագիրտաց. իսկ այլքն գնեցան ժամանակէ ի ժամանակ դրամով պարգևատուաց որք յայն պէտս տրովք օգնական եղեն գրադարանին:

5.- Կառավարութիւն գրատան Լիցի ի ձեռս գլխաւոր Վարժապետին կամ իրեկտորին:

6.- Աշակերտք Մարդասիրական ճեմարանին, թէ ելեալքն ի ճեմարանէն և թէ որք ուսանին անդ, կարեն ի փոխ ստանալ զմատենաս ի գրատանէն. և զկնի ընթերցման յետս դարձուցանել զայնս անվնաս:

7.- Ուսումնասէրքն ևս յազգէս Հայոց կարեն յանօթ ստանալ ի գրատանէն զմատենաս, և առանց յերկար պահելոյ զայնս, յետս դարձուցանել ի գրատունն անվնաս:

8.- Փոխառուքն մատենից կարեն ծանուցանել իրեկտորին, այսինքն Հայ գլխաւոր Վարժապետին, զանուն մատենիցն, զորս կամին ստանալ ի փոխ. և տոմսակ նոցա Լիցի ստացական թուղթ վասն մատենիցն ստացելոց: իրեկտորն քաջ զգուշացի ի փոխ տալ զմատենաս այնպիսեաց, յորոց մարթեցէ յետս ստանալ զայնս անթերի և անվնաս:

9.- Յաւուրս կիւրակէից փակեալ Լիցի գրատունն, իսկ յայլ աւուրս, բաց:

10.- Ազգասէրքն և ուսումնասէրքն յազգէս Հայոց հաճեսցին պարգևել զմատենաս գրատանն, և յղել զպարգևս իւրեանց առաջին հազարաձուին ճեմարանին. յորմէ և ունին ստանալ զթուղթս շնորհակալութեան վասն պարգևաց իւրեանց:

11.- Անուն պարգևատուին դրոշմեսցի ի ճակատու պարգևեալ մատենիցն, ի յիշատակ ազգասիրութեան և գրասիրութեան նորին:

— 000000 —

ԳԼՈՒԽ Ի.

Հրահանգ Հաւատոյ

1.- Հաւատոյ ուսումն տացի մանկանց ճեմարանին ըստ վարդապետութեանց և կանոնաց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

2.- Հաւատոյ հրահանգն բաժանեսցի յերկուս, ըստ հետագայ օրինակի, ի Հայկականին և յԱնգղիականին:

3.- Ի Հայկականին, հաւատոյ հրահանգն պարունակեսցէ զփրիստոնէական կրթութիւնն Եկեղեցւոյն Հայաստանեայց, երկիցս տպագրեալ ի Կալկաթա ի տպարանի Մարդասիրական ճեմարանին, և ի գործատան Եպիսկոպոսական ճեմարանին, յամի 1827 և յամի 1841, զհամառօտ պատմութիւն Աստուածաշունչ մատենից տպագրեալ ի Սանկտպետրբուրգ յամի 1785 և ի Մարդասիրական ճեմարանին յամի 1827, և բովանդակեալ ի քսան մասունս ի գիրսն կոչեցեալ աղօթամատոյց. նաև զԱստուածաշունչ մատենաս և զայնպիսի գրեանս հաւատոյ, որ չունիցին ինչ բանս հակառակս դաւանութեան Եկեղեցւոյն Հայոց:

3. Amongst the Armenian collection of books are found some valuable manuscripts of ancient Armenian authors.

4. The greater portion of the above books are donations from patriotic literary Armenians, and the rest have, from time to time, been purchased by the means of liberal donors, who have contributed to the Library, in a pecuniary point of view to that end.

5. The management of the Library is vested in the hands of the Armenian Head Master or Rector.

6. The pupils of the Armenian Philanthropic Academy, that have left the institution, as well as those that are still attached to it, shall borrow books from the Library, and return them uninjured after perusal.

7. Such of the Armenians as cherish a desire for knowledge and learning, shall also borrow books from the Library, and without detaining them for a long period of time, shall return them to the Library without any injury being done to them.

8. Intending borrowers of books shall intimate to the Armenian Head Master or Rector the names of the books, of which they are desirous to have the loan, and their notes shall be deemed as receipts for the books lent to them. The Rector shall exercise discretion in lending books to such individuals, as are likely to return them entire and uninjured.

9. The Library shall be open during the days in the week, Sundays excepted.

10. Patriotic and literary Armenians are requested to present books to the Library, and to send their donations to the first manager of the institution, from whom they shall receive letters of thanks for their presentations.

11. The names of the donors shall be inscribed on the books presented by them, as a remembrance of their patriotism and love of knowledge.

CHAPTER XX

Religious Instruction.


1. The religious instruction given to the pupils of the institution, shall accord with the doctrines and canons of the Church of Armenia.

2. The religious instruction shall be divided into two, in the following manner, both in the Armenian and English departments.

3. In the Armenian department, the religious instruction shall be comprised in reading the Catechism of the Church of Armenia, twice printed in Calcutta in 1827 at the press of the Armenian Philanthropic Academy, and in 1841 at the Bishop's College press; a short history of the Bible, printed at St. Petersburg in 1785 and in the press of the Armenian Philanthropic Academy in 1827; and consisting of twenty parts, attached to the Armenian Prayer-book; the Old and New Testaments and such other religious books, as shall not be deemed contrary to the doctrines of the Church of Armenia.

4.- Բաց ի վերնոյն հրահանգաց և ի պատմութենէ, ընթերցեալ
Լեցին կարճառօտ ֆրիստոնէական հրահանգքն ի պէտս սակաւատի ման-
կանց, ևս և յատուկ անուանց, Հին և Նոր կտակարանաց, տպագրեալ
ի գործատան Եպիսկոպոսական ճեմարանին, յամի 1841, ի պէտս ման-
կանց Մարդասիրական ճեմարանին:

5.- Յանգղիականին, մանկունքն ընթերցցին զհին և զնոր կտա-
կարանս առ Անգղիացի վարժապետս իւրեանց, թէ յաւուրս շաբաթու, և
թէ յայլ աւուրս եօթնեկի, ըստ տնօրէնութեան հոգաբարձուացն ճեմա-
րանին:



4. In addition to the above mentioned Catechism and scriptural history, the pupils shall read the short Catechism adapted for little children, and comprising the proper names of the Old and New Testaments, printed at the Bishop's College press in 1841, for the use of the children of the Armenian Philanthropic Academy.

5. In the English department, the pupils shall read the Old and New Testaments to the English Masters, both on Saturdays and on other days in the week, conformably to the discretion of the managers of the institution.

Կ Ա Ր Գ Ք Ա Ղ Օ Թ Ի Ց

Ի Պ Է Տ Ս Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Ց

Հ Ա Ց Կ Ե Ա Ն Մ Ա Ր Դ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի Ն

Կ Ա Ր Ք Ք Ա Ղ Օ Թ Ի Ց

Ի Պ Է Տ Ս Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Ց

ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

—○○○○○○○○—

FORMS OF PRAYER

for the Pupils of the

ARMENIAN PHILANTHROPIC ACADEMY.

ԳԼՈՒԽ ԽԱՊ

Աղօթք առաւօտեան արարեալ ի սրբազան Սիմէօնէ
Կաթողիկոսէն Ամենայն Հայոց

— 0 — 0 — 0 — 0 —

Գոհանամ զքէն, Տէր իմ և Աստուած իմ, և օրհնեմ և փառաւորեմ
զսուրբ անուն քո՝ որ պահեցեր զանարժան և զմեղաւոր ծառայս քո ի գիշե-
րիս յայսմիկ յամենայն վտանգից և փորձութեանց, և հասուցեր խաղաղութեամբ
ի ժամ առաւօտուս՝ և արժանացողցեր տեսանել զլոյս ողորմութեան քո:

Եւ այժմ աղաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած իմ, պահեա զիս և ի
տուրնջեանս յայսմիկ ամենազօր աջով քով՝ և փրկեա յամենայն վտանգեր
պատահմանց՝ ի յերեւելի և յաներևոյթ թշնամեաց, և յամենայն մեղսառիթ
խորհրդոց, ի բանից և ի գործոց: Եւ զգնացս իմ ուղիղ արա՝ զի մի տի-
րեսցեն ինձ ամենայն մեղք:

Առաջնորդեա ինձ ի խորհուրդս բարիս, ի բանս ճշմարիտս և ի
գործս անմեղսածինս և օգտակարս:

Դու լեր վերակացու և առաջնորդ սխալական ծառայիս քոյ յամե-
նայն գնացս իմ՝ և փրկեա զիս ի գայթակղութենէ դիւրին ի հասարակ աւուրս՝
և զգործս ձեռաց իմոց ուղիղ արա և յաջողեա ինձ: Եւ դու պատրաստեա
զպիտոյս հոգևոյ և մարմնոյ իմոյ: Եւ հասո խաղաղութեամբ, առանց մեղաց
և փորձանաց ի ժամ երեկոյիս: Զի և յայնմ ժամու փառաւորեցից զսուրբ
Երրորդութիւնդ, որում միշտ վայել է փառք յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն:

— 0 0 0 0 0 0 0 0 —

Ապա ընթերցեալ լինին գոնէ երկու սաղմոսք, ի սկզբանէ պահելով
զկարգ մինչև ցվերջ սաղմոսացն: Զկնի որոյ ասասցեն
զհետագայ զաղօթս զայս:

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Ամենակալդ Աստուած, որ ետուր մեզ շնորհս յայսմ ժամու, զա-
ղօթս և զպաղատանս մեր միաբան մտուցանել առ քեզ՝ և ասացեր թէ յոր-
ժամ երկու կամ երեք ժողովեալ իցեն յանուն քո ի միասին, կատարեսցեն
զխնդրուածս նոցա: Արդ կատարեա Տէր զիղձս և զհայցուածս ծառայից քոց,
զբարին, զհաճոյն և զկատարեալն, տալով մեզ ի կենցաղումս յայսմիկ ըզ-
գիտութիւն ճշմարտութեան քո, և ի հանդերձելումս զկեանս յաւիտենականս՝
Ամէն:

— 0 0 0 0 0 0 0 0 —

Ապա ասասցեն զՀանգանակն Նիկիական, զկնի որոյ
կրկնեսցեն զՏէրուական աղօթսն:

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ն Ի Կ Ի Ա Կ Ա Ն

Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի,
երևելեաց և աներևութից: Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստու-
ծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածինս՝ այսինքն յէութենէ Հօր: Աստուած
յԱստուծոյ՝ Լոյս ի Լուսոյ՝ Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծը-
նունդ և ոչ արարած՝ Կոյն ինքն ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղև
յերկինս և ի վերայ երկրի՝ երեւելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդ-
կան, և վասն մերոյ փրկութեան, իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգևովն սրբով:

CHAPTER XXI.

Morning Prayer, written by Simeon, Supreme Hierarch of Armenia.

I thank thee, O Lord my God, and bless and glorify thy holy name; who protected thy unworthy and sinful servant, during the night, from all perils and dangers, and brought me in peace to the dawn of the morning, and vouchsafed me to see the light of thy mercy.

And now, I beseech thee, O Lord my God, protect me also, during the day, by thy almighty hand, and save me from all hurtful accidents, from visible and invisible enemies, and from all sinful thoughts, words and deeds. Order my steps in thy word: and let not any iniquity have dominion over me.

Lead me in good thoughts, in true words, and in deeds free of sin and full of gain.

Be thou the guardian and guide of me, thy erring servant, in all my steps, and save me from the destruction that wasteth at noon-day. And establish thou the work of my hands upon me; yea, the work of my hands establish thou it. And do thou provide for the wants of my soul and body. And bring me in peace, without sin and temptation, to the hour of the evening; that I may in that hour also glorify the Holy Trinity, to whom always belongeth glory, for ever and ever. AMEN.

Then shall be read, at least, two Psalms, keeping the order thereof from the beginning to the end. After which the following Prayer shall be repeated.

A PRAYER OF ST. JOHN CHRYSOSTOM.

Almighty God, who has given us grace at this time with one accord to make our common supplications unto thee; and dost promise, that when two or three are gathered together in thy Name thou wilt grant their request; Fulfil now, O Lord, the desires and petitions of thy servants, as may be most expedient for them; granting us in this world knowledge of thy truth, and in the world to come life everlasting. AMEN.


Then shall be said the Nicene creed, which shall be concluded by the Lord's Prayer.

 THE NICENE CREED.

We believe in one God the Father Almighty, Creator of heaven and earth, and of all things, visible and invisible.


And in one Lord Jesus Christ, the only begotten Son of God the Father, namely, of the essence of the Father. God of God, Light of Light, Very God of Very God, begotten, not made, Being of one nature with the Father, By whom all things were made in heaven and on earth, visible and invisible: Who for us men, and for our salvation came down from heaven, was incarnate, became man, was begotten perfectly of the Holy

Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն, որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, և ելեալ ի յերկինս նովին մարմնով, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս: որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ի սուրբ Հոգին, յանեղն և ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան. քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի: Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց: Յարքայութիւն երկնից և ի կեանսն յաւիտենականս:




Ա Ղ Օ Թ Ք Տ Ի Ր Ո Ի Ն Ա Կ Ա Ն

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանի՛ր զմեզ ի փորձութիւնս. այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն:



Աղօթք յառաջ քան զճաշն


Հայր մեր որ յերկինս ես. և այլն:



Աղօթք զկնի ճաշուսն:

Հայր մեր որ յերկինս ես. և այլն:

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց: Դոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ ուրախութեամբ. և լցուցեր զսիրտս մեր ամենառատ բարութեամբ քով: Աղաչեմք և խնդրեմք ի քէն Տէր, շնորհեա երկրի մերում զառատութիւն ջրոց, զպտղաբերութիւն բուսոց և տնկոց, և զլիութիւն ամենայն իրաց. որովք դարմանեալ զկեանս մեր, տացուք զօրհնութիւն և զփառս Պարգևողիդ բարութեանց, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



Holy Virgin Mary by the Holy Ghost: Whereby he took body, soul and mind, and all that is in man, in reality and not by imagination. He suffered, was crucified, buried, and the third day he rose again, ascended into heaven with the same body, and sitteth on the right hand of the Father. And he shall come again with the same body and the glory of God to judge both the quick and the dead; of whose kingdom there shall be no end.

And we believe in the Holy Ghost, uncreate and perfect, who spake by the Laws, the Prophets and the Gospels; who descended on the river Jordan, proclaimed the Son sent by the Father, and dwelt in the Saints. And we believe in one sole Catholic and Apostolic Church, in one Baptism, Repentance, Expiation and Absolution of sins; in the Resurrection of the dead, in the everlasting Judgment of souls and bodies; in the kingdom of Heaven and in the life of the world to come.

THE LORD'S PRAYER.

Our Father which art in heaven, Hallowed be thy name. Thy Kingdom come. Thy will be done in earth, As it is in heaven. Give us this day our daily bread, And forgive us our trespasses, As we forgive them that trespass against us. And lead us not into temptation; but deliver us from evil. For thine is the Kingdom, and the power and the glory, for ever and ever. AMEN.

PRAYER BEFORE MEALS.

Our Father which art in heaven, &c.

PRAYER AFTER MEALS.

Our Father which art in heaven, &c.


O Lord, Jesus Christ, we are filled with the bounties. We thank thee, O Lord, who fed us with joy, and replenished our hearts with thy superbundant goodness. We beseech and implore thee, O Lord, grant to our land plentifulness of waters, fruitfulness of plants and trees, and fulness of all things; from which deriving our nurture and sustenance, we may bless and glorify thee, the bestower of all goodness, now and always, for ever and ever. AMEN.

Աղօթք երեկոյան արարեալ ի սրբազան Սիմէօնէ
Կաթողիկոսէն Ամենայն Հայոց

Գոհանամ զքէն, Տէր իմ և Աստուած իմ, և օրհնեմ և փառաւորեմ զսուրբ անուն քո՝ որ պահեցեր զանարժան և զմեղաւոր ծառայս քո ի տուրնջեանս յայսմիկ և հասուցեր խաղաղութեամբ ի ժամ երեկոյիս:

Եւ այժմ, աղաչեմ զքեզ, տէր իմ և Աստուած իմ՝ որ արարեր զտիւն ի գործել, և զգիշերն, ի հանգչիլ տկար բնութեանս մերոյ՝ արդ տուր ծառայիս քոյ ննջել մարմնով, և մնալ արթուն հոգևով և մտօք:

Տէր իմ և Աստուած, ահա ես ննջեմ, և անկեալ դնիմ որպէս դի անկենդան՝ և ոչ գիտեմ զերբ և զորպէս յառնելն իմ՝ վասն որոյ զհոգիս, զմարմինս և զամենայն պարագայս իմ յանձնեմ յանհուն ողորմութիւնս քո՝ և խնդրեմ զի դու ամենազօր աջովդ քո կնքեսցես զտեղի և զյարի, զելս և զմուտս ծառայիս քոյ՝ որով ննջեցից ապահով և աներկիւղ խաղաղութեամբ և առանց փորձանաց: Պահպանեալ զիս յամենայն թշնամեաց հոգեկանաց և մարմնականաց, և յորոգայթից նոցին՝ փրկեալ զիս յիրէն, որ շրջի ի խաւարի՝ ի գիշերային երկիւղէ, ի դիւական ցնորմանց, և ի զարհուրեցուցիչ երևմանց: Մաքրեալ միտս իմ յամենայն թիւր մտածմանց, յաղտեղի խորհրդոց և յամենայն մեղսածին շարժմանց: Կացո պահպան և վերականգնու յանցաւոր ծառայիս քոյ, զբանակս երկնայնոցդ զինուորութեանց, ընդ իմ մոյ հրեշտակին՝ և զնշան ամենայն խաչի Գրիստոսիդ՝ որովք ննջեցից ապահով և աներկիւղ ի գիշերիս յայսմիկ և ժամանեցից խաղաղութեամբ ի ժամ առաւօտունս՝ զի և յայնմ ժամու փառաւորեցից զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, որով միշտ վայել է փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն:



Աղօթք զօրաւորք ընդդէմ արհաւրաց գիշերայնոց,
սասցեալ ի սրբոյն Գրիգորէ Կարեկացւոյն

Աստուած յաւիտեական, բարերար և ամենակալ: Ստեղծիչ Լուսոյ և յօրինիչ գիշերոյ: Կեանք ի մահու և Լոյս ի խաւարի: Յոյս ակնունդաց և երկայնմտութիւն տարակուսելոց: Որ ամենարուեստ իմաստութեամբ քո, զարձուցանես յայգ զստուերս մահու: Աննուազ ծագումն, և անմուտ արեգակն: Քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տեղութեան քոյ, խաւար գիշերոյ: Որով կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց: Որ Լսես զհեծութիւն կապելոց և ցայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զխնդրուածս նոցա: Աստուած իմ և թագաւոր իմ՝ կեանք իմ և ապաւէն իմ՝ յոյս իմ և վստահութիւն իմ՝ Յիսուս Գրիստոս Աստուածդ ամենայնի: Սուրբդ հանգուցեալ ի հոգիս սրբոց: Միթաթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց: Որ գիտես զամենայն յառաջ քան զԼինիլ նոցա՝ առաքեալ պահպանողական զօրութիւն աջոյ քոյ՝ և փրկեալ զիս յերկիւղէ գիշերի և ի դիւէ շարէ: Որպէսզի զյիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգևոյ ըղձութեան շրջոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ, որ կարգան զքեզ ի բոլոր սրտէ:

Evening Prayer, written by Simeon, Supreme
Hierarch of Armenia.

I thank thee, O Lord my God, and bless and glorify thy holy name; who protected thy unworthy and sinful servant during the day, and brought me in peace to the hour of the evening.


And now, I beseech thee, O Lord my God, who created the day for labor, and the night for the rest of our infirm nature, grant to thy servant to sleep in body, and to continue awake in soul and in mind.

O Lord my God, Lo! I sleep and lie in bed as a lifeless body, and do not know when and how to awake! I repose, therefore, my soul, my body, and all my concerns on thy infinite mercy. I implore thee to seal with thy all-powerful hand the place and the roof, the egress and the ingress of thy servant, that I may sleep in peace, secure from all fear, harm and perils. Protect me from all adversaries, both spiritual and bodily, and guard me from their machinations. Save me from the pestilence that walketh in darkness, from nocturnal terror, from spectres and phantoms, and from frightful apparitions. Purify my mind from all rebellious thoughts, from all impure ideas, and from all concupiscent emotions. Place the array of thy heavenly hosts, as guards and protectors, over thy sinful servant. Confide me to the shelter of my guardian angel. Reflect on me the ray of thy all-conquering Cross. Help me to sleep, secure from all fear and harm, during this night, and bring me in peace to the dawn of the morning, that I may also in that hour glorify the Father, the Son, and the Holy Ghost, to whom belongeth everlasting glory and adoration, for ever and ever. AMEN.

Evening Prayer, written by St. Gregorius Narekensis,
towards the close of the tenth century.

O God eternal, beneficent and almighty, creator of light and maker of night; life in death and light in darkness; hope of those waiting in expectation, and longsuffering of those perplexed with embarrassments! Thou convertest the shadows of death into dawn with thy most unscrutable wisdom. Thou ever resplendent and glorious son of righteousness, the light of whose rising is inexhaustible, and the beams of whose splendour are undiminishable! The gloom of night fails to shroud the glory of thy dominion! To the every knee bows in adoration, of beings in heaven, and beings in earth and beings under the earth! Thou listenest to the cries of those that are in bondage, and lookest to the prayers of the humble, and grantest their petitions! O my God and my king, my life and my refuge, my hope and my trust! O thou Jesus Christ, God of all! O thou holy Saviour, dwelling in the souls of the Saints! O thou consolation of sorrows, and purifier of sinners! Thou knowest all things, before they come to their existence. Extend the power of thy protecting arm, and save me from the terror of night and from the evil spirit; so that ever fervently cherishing the memory of thy awful and holy name with the ardent desire of my soul, I may live protected with those, who invoke thee from their whole hearts! And by the impress of thy symbol, the


Եւ ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր աստուածային արեամբդ քո ներկեալ նորոգեցեր, և ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և ի փառս պատկերի քոյ նկարեալ յօրինեցեր՝ այսոքա պարգևօք աստուածականօք, ամաչեսցէ սատանայ՝ քակտեսցին մեքենայքն՝ բարձցին որոգայթքն՝ պարտեսցին մարտուցեալքն՝ պակասեսցին զէնքն սայրասուրբ՝ մերժեսցի մէգն՝ փարտեսցի խաւարն՝ մեկնեսցի մառախուղն՝ բազուկ քո հովանասցի և աջ քո կնքեսցէ՝ վասն զի զթած ես և ողորմած՝ և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց՝ Եւ քեզ ընդ Հօր, Հոգևորդ սըրբով փառք, իշխանութիւն յաւիտեանս յաւիտեանից՝ Ամէն:



Ապա ընթերցեալ Լիւնին գոնէ երկու սաղմոսք, ի սկզբանէ պահելով զկարգ մինչև ցվերջ սաղմոսացն: ԶԼիւնի որոյ սասացեն զհետագայ զաղօթս զայսս:


ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ

Ամենակալդ Աստուած, որ ետուր մեզ շնորհս յայսմ ժամու, զաղօթս և զպաղատանս մեր միաբան մատուցանել առ քեզ և առացեր, թէ յորժամ երկու կամ երեք ժողովեալ իցեն յանուն քո ի միասին կատարեսցեն զինդրուածս նոցա: Արդ կատարեալ Տէր զիղձս և զհայցուածս ծառայից քոց, զբարին, զհաճոյն և զկատարեալն, տալով մեզ ի կենցաղումս յայսմիկ զգիտութիւն ճշմարտութեան քո, և ի հանդերձեւումս զկեանս յաւիտեանս: Ամէն:




Ա Ղ Օ Թ Ք Տ Ե Ր Ո Ւ Ն Ա Կ Ա Ն

Հայր մեր, որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո՝ եկեսցէ արքայութիւն քո՝ եղիցին կամք քո որչա՛ս յերկինս և յերկրի՝ զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և ըող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց՝ և մի տանիք զմեզ ի փորձութիւնս՝ այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Ամէն:



Ծանօթ
Մեքենագրեցաւ
յիսկական օրինակէ
Տպեալ ի Կալկաթա յամի 1843,
ի 15^ն Ապրիլի 1966 ամի
Ի Կ Ա Լ Կ Ա Թ Ա

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆԵԱՆ,
Փ. Ա. ԳԵՈՐԳԵԱՆԻ,
Պ. Յ. ՊՕՂՈՍԵԱՆ,
ԱԻԵՏԻԲ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ,
Հուբաբարձուք Հայկեան Մարդասիրական Ճեմարանին:



the holy Cross, which thou hast died and sealed with thy divine blood; by the regeneration which thou hast wrought in us by the grace of adoption; and by the lustre of the glory of thy form which thou hast restored to us - by these divine endowments - let Satan be confounded, his machinations destroyed, his wiles and plots frustrated, his champions defeated, his pointed weapons foiled, his gloom dispelled, his darkness dissipated, his mists dissolved! Let thy wing shadow us, and thy hand seal us. For thou art compassionate and merciful, and thy servants are called by thy name. And to thee, and to the Father, and to the Holy Ghost, be glory and dominion, for ever and ever. AMEN.

Then shall be read, at least two Psalms, keeping the order thereof from the beginning to the end. After which the following Prayer shall be repeated, and concluded by the Lord's Prayer.

A Prayer of St. John Chrysostom.

Almighty God, who hast given us grace at this time with one accord to make our common supplications unto thee; and dost promise, that when two or three are gathered together in thy Name thou wilt grant their request; Fulfil now, O Lord, the desires and petitions of thy servants, as may be most expedient for them; granting us in this world knowledge of thy truth, and in the world to come life everlasting. AMEN.

THE LORD'S PRAYER.

Our Father which are in heaven, Hallowed be thy name. Thy Kingdom come. Thy will be done in earth, As it is in heaven. Give us this day our daily bread. And forgive us our trespasses, As we forgive them that trespass against us. And lead us not into temptation; but deliver us from evil. For thine is the Kingdom, and the power and the glory, for ever and ever. AMEN.

MARTYRUS SARKIES OWEN,

P. A. CAVORKE,

P. J. PAUL,

A. GALSTIN.

MANAGERS OF THE ARMENIAN PHILANTHROPIC
ACADEMY.

